

Ով ինչին է ուշադրություն դարձնում

Հայաստանի և Ադրբեջանի միջազգային լրատվությունը

Փորձարարական տվյալներ և բարելավման
հանձնարարականներ

Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոններ

CR RC


Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ծրագիր



ԵՎՐԱՍԻԱ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ



Բրիտանական դեսպանատուն
Երևանում

Հոկտեմբեր 2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ.....	6
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	7
ՀԱՅԱՍՏԱՆ.....	11
Մասն 1 լրատվամիջոցներ.....	11
Մասն 2 հաղորդումներ.....	18
ԱԴՐԲԵՋԱՆ.....	22
Մասն 1 լրատվամիջոցներ.....	22
Մասն 2 հաղորդումներ.....	25
ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ.....	29
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	32
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿ.....	30
Հայաստան.....	30
Ադրբեջան.....	32
ՀԱՎԵԼՎԱԾ 1 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	34
ՀԱՎԵԼՎԱԾ 2 ՖՈԿՈՒՄ ԽՄԲԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ.....	35
Հայաստան.....	36
Ադրբեջան.....	37
ՀԱՎԵԼՎԱԾ 3 ՖՈԿՈՒՄ ԽՄԲԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ.....	38

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն զեկույցի նպատակն է քննել ՁԼՄ-ների աչառությունը միջազգային լրատվության, և հատկապես դարաբաղյան հակամարտությանը վերաբերող հաղորդումներում: Ձեկույցի նյութը քաղված է առկա աղբյուրներից և լրացված՝ վերջերս Երևանում և Բաքվում ստեղծված ֆոկուս խմբերից հավաքված արդյունքներով, որ ավելի խորացնում և հստակեցնում են արդեն եղած տվյալները:

Ձեկույցը եզրակացնում է, որ երկու երկրների մայրաքաղաքներում էլ ընդհանուր առմամբ՝ անկախ և անաչառ ՁԼՄ-ների հույժ կարիք կա: Սակայն դարաբաղյան հակամարտության պարագայում Երևանի և Բաքվի բնակիչները տարբեր տեսակետներ ունեն ՁԼՄ-ների ազատության մասին և հակամարտությանը վերաբերող անաչառ հաղորդումները խնդրահարույց են համարում:

- Շատ հայեր գտնում են, որ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ավելի ազատ տեղեկատվությունը վտանգավոր է ազգային անվտանգության տեսակետից, և շատ լրագրողներ հակամարտության մասին գրելիս ինքնագրաքննություն են կիրառում:
- Ադրբեջանցիներին մտահոգում է այն, որ Լեռնային Ղարաբաղի մասին նորմալ լրատվությունը կարող է հանգեցնել այն բանին, որ երիտասարդ սերունդը մոռանա դրա կարևորությունը: Նրանք համոզված են, որ լրատվությունը պետք է ծառայի հայերի հանդեպ ատելություն և վրեժխնդրություն բորբոքելուն:

Թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի մայրաքաղաքներում անհանգստացած են տեղական հեռուստատեսության նկատմամբ հետաքրքրության անկմամբ և օտար աղբյուրներից կախվածության աճով. սա իր հերթին վկայում է քաղաքացիական տարանջատվածության մտահոգիչ մակարդակի մասին: Ավելին՝ եթե հետաքրքիր և օրախնդիր թեմաները չհամապատասխանեցվեն պահանջարկին, ապա այս տարանջատվածությունը կարող է հանգեցնել ազգային ՁԼՄ-ների կողմից ընթացիկ իրադարձությունների լուսաբանման էլ ավելի արժեզրկման:

- Երևանի բնակչությունը գտնում է, որ բոլոր հիմնական հեռուստակայանները վերահսկվում են պետության կողմից, ինչպես նաև՝ որ նրանք իրենց լրատվությունը կրկնօրինակում են այլ աղբյուրներից, միաժամանակ խեղաթյուրում են ընթացիկ իրադարձությունների մասին սյուժեները՝ հասարակության մեջ դրանց մասին իրականությունից հեռու տպավորություն ստեղծելու նպատակով:
- Բաքվի բնակչությունը գտնում է, որ հեռուստատեսության ոլորտը բևեռացված է ընդդիմադիր և իշխանամետ ալիքների միջև: Այստեղ ևս համարում են, որ լրատվությունը կրկնօրինակում է օտար լրատվական ծառայություններին, ինչպես նաև գտնում են, որ պետական ալիքները հիմնականում խուսափում են լրատվությունից և կենտրոնացած են այնպիսի ոչ վիճահարույց նյութերի վրա, ինչպիսիք են սպորտը և գեղեցկությունը:

Այս տվյալների առնչությամբ զեկույցի հանձնարարականներն են՝

- Դոնոր համայնքը պետք է ՁԼՄ-ների ուժեղացման իր ջանքերն ուղղի մի կողմից, պետական վերահսկողությանն ավելի պակաս ենթակա նոր տեխնոլոգիաների վրա, մյուս կողմից, Հայաստանի և Ադրբեջանի ողջ ազգաբնակչությանը (և ոչ թե միայն մայրաքաղաքներում բնակվող ընտրանուն) այդ տեխնոլոգիաներից օգտվելու համար անհրաժեշտ ենթակառուցվածք և կրթություն տրամադրելու վրա:
- Լրագրողի վարքագծի նորմերի վերահսկողությունը կանոնակարգելու փոխարեն, լրագրողներն ու դոնորները պետք է համատեղ աշխատանքով ստեղծեն լրագրողների համագործակցության ավելի ինքնապահպան մշակույթ՝ այնպիսին, որը սևեռված կլինի բարոյական գործունեության հասարակություն ստեղծելու խնդրի վրա:
- Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների հետ համագործակցող հասարակական կազմակերպությունների և դոնոր համայնքների պարտնյորները պետք է մշտապես իրենց կողմից

աջակցություն ստացող ՋԼՄ-ների ուշադրությունը հրավիրեն այն հանգամանքին, որ ճշմարիտ տեղեկատվությունն իրապես կարող է համապատասխանել ազգային շահերին: Պետք է կարևորել այն հանգամանքը, որ օբյեկտիվ հաղորդումները նպաստում են ոչ միայն կայունությանը տեղում, այլև երկու երկրների աշխարհաքաղաքական շահերին և տևական ապահովությանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՁԼՄ-ներն ի գորու են սրելու եղած լարվածությունը և ուժգնացնելու տարածայնությունները, սակայն նրանք նաև իրադարձությունների լայն սպեկտրի լուսաբանման, աղբյուրները տարբերակելու, ավելի շատ ձայներ (և ոչ միայն ընտրանու ձայները) հնչեցնելու, լրատվությունից աչառությունը հետևողականորեն բացառելու միջոցով պառակտման գծի երկու կողմերի միջև վստահություն կառուցելու ներուժ ունեն: Հայաստանյան և ադրբեջանական ՁԼՄ-ների մոնիտորինգի արդյունքները ցույց են տալիս, թե ինչպես գլխավոր թերթերի հրատարակած հոդվածներում տեղ գտած անձտությունները երկու երկրներում էլ «առանց որևէ նոր կամ անհրաժեշտ տեղեկություն հաղորդելու, հասարակական գիտակցության մեջ բացասական համատեքստ են ստեղծում, որը կասեցնում է երկխոսությունն ու փոխըմբռնումը»:¹ Չունենալով մեկը մյուսի մասին ավելի բարեխիղճ և անաչառ, բացասական ճարտասանությունից և կարծրատիպերից զերծ տեղեկատվություն, Հայաստանն ու Ադրբեջանը կշարունակեն միմյանց թշնամաբար վերաբերվել:

Այսպիսով, ԵՀՀ-ը նախաձեռնել է «*Անաչառ ՁԼՄ-լրատվություն Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների վերաբերյալ*» ծրագիրը, որը նպատակ ունի ավելացնելու բարեխիղճ և անաչառ հաղորդումները Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունների, ինչպես նաև բուն՝ դարաբաղյան հակամարտության վերաբերյալ: Ծրագիրը նախատեսում է ստեղծել երկու երկրների խմբագիրների, լրագրողների և ՁԼՄ հասարակական կազմակերպությունների համագործակցության ցանց:

Ծրագիրը նաև հաշվի է առնում այն պատկերացումը, թե «օբյեկտիվ» հաղորդումները կարող են կորստաբեր լինել աշխարհի շատ լրատվամիջոցների համար, քանի որ ոմանք համարում են, որ *օբյեկտիվ* լրատվությունը *ձանձրալի* լրատվություն է: Լրագրողները ստիպված են մատուցել լավ վաճառվող, տպավորիչ նյութ: Արդյունքը կարող է լինել այն, որ որոշ նյութեր ծայրաստիճան սենսացիոն գույներով են մատուցվում: Առաջադրվում են նաև տեսական հարցադրումներ այն մասին, թե կարող են արդյոք լրագրողները լիովին օբյեկտիվ լինել: Եվ ուրեմն, ծրագիրը, փոխանակ սևեռվելու երկու կողմերի հաղորդումների օբյեկտիվության վրա, անդրադառնում է անբարեխիղճության և աչառության, ինչպես նաև էթիկայի և հակամարտության հանդեպ զգայուն լրագրողության խնդիրներին, որոնք առանձնակի գրավչություն ունեն նրանց համար, ում վերջնական նպատակը իր արտադրանքի վաճառքն է:

Ավելի լավ հասկանալու համար, թե ինչ կերպ են լրատվության սպառողներն ընկալում ժուռնալիզմի ներկա վիճակը, ինչպես նաև նվազագույն հիմնական տվյալները նախապատրաստելու համար, ՀՌԿԿ-ն գործի է դրել ութ ֆոկուս խմբեր՝ չորսը Երևանում, չորսը Բաքվում (լրացուցիչ տեղեկությունները տես՝ ՀԱՎԵԼՎԱԾ 1): Թեև Հայաստանում և Ադրբեջանում ՁԼՄ-ների նկատմամբ հասարակության վստահության մակարդակը, ինչպես նաև աչառության հանդեպ վերաբերմունքն ուսումնասիրելու ուղղությամբ որոշակի խատանքներ կատարվել են, սակայն ոչ ոք վերը շարադրվածից ավելի չի խորացել, և ոչ էլ նման խնդիրների վերաբերյալ գոյություն ունեցող գրականության ակնարկ է ներկայացվել: Ստորև բերված զեկույցը արդյունք է ՀՌԿԿ-ի ղեկավարությամբ կատարված կաթինետային ուսումնասիրության և ֆոկուս խմբերի աշխատանքի, որի նպատակն է եղել նախնական գնահատական տալ ՁԼՄ-ների հանդեպ հասարակության ունեցած վերաբերմունքին, հատկապես, Հայաստան - Ադրբեջան հարաբերությունների հարցում:

Մեր զեկույցը, ինչպես որևէ այլ նման աշխատություն, անկասկած, լիակատար չէ: Բավականին փոքրաթիվ ֆոկուս խմբերը երկու երկրներում էլ գործել են միայն մայրաքաղաքներում և աշխատել են միայն ընթացիկ իրադարձություններով և քաղաքականությամբ ակտիվորեն հետաքրքրված անհատների հետ: Այնուամենայնիվ, մեր զեկույցը ձգտում է հիմնավորել ֆոկուս խմբերի մասնակիցների կողմից ներկայացվող բոլոր պահանջները, օգտվելով Հայաստանում և Ադրբեջանում կատարված այլ

¹ Yerevan Press Club, Yeni Nesil Journalists Union of Azerbaijan & Black Sea Press Association (2005). *What Can a Word Do? Materials of Armenian, Azerbaijani and Georgian Press Analysis*. Retrieved Sep tember 20, 2008 from <http://www.ypc.am/eng/?go=act/studies>

հետազոտություններից, ինչպես նաև փորձագետների հարցազրույցներից ՁԼՄ-ների գործիչների հետ՝ ոչ միայն Հայաստանում և Ադրբեջանում, այլև Թուրքիայում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԱՐԿ

Ուսումնասիրողներից շատերը գտնում են, որ ՁԼՄ-ների ազդեցությունն ավելի ուժեղ է ծայրամասերում, որտեղ տեղեկատվության այլընտրանքային միջոցները սահմանափակ են: Ուրիշները պնդում են, որ ՁԼՄ-ների դերն ավելի մեծ է հենց ծայրամասերում, ուր քաղաքացիները կախման մեջ են փոքրաթիվ լրատվական միջոցներից, և որ ընդհակառակը՝ քաղաքացիները պակաս ենթակա են ՁԼՄ-ների հնարավոր ազդեցությանը, երբ տեղեկատվության այլընտրանքային միջոցներ ունեն:² Ըստ ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնության (այսուհետև՝ ՏՀՆ), Հայաստանում հարցվածների 67 և Ադրբեջանում հարցվածների 79 տոկոսի համար հեռուստատեսությունը պետական քաղաքականության մասին տեղեկատվության հիմնական աղբյուրն է:³ Բացի այդ, Հայաստանում կատարված այլ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ թեև լրատվական թողարկումների թիվը բավականին բարձր է, դրանք այլընտրանքային քաղաքական տեսակետներ չեն ներկայացնում:⁴ Նույնը կարելի է ասել և Ադրբեջանի վերաբերյալ:

Բացի այդ, որոշ գիտնականներ գտնում են, որ ՁԼՄ-ների ազդեցությունն ավելի մեծ է քաղաքականության մեջ նվազ ներգրավված կամ քաղաքականությամբ նվազ հետաքրքրված անհատների վրա: Քաջատեղյակ և քաղաքականապես ակտիվ քաղաքացիները խորապես արմատացած դիրքորոշում ունեն և հեշտությամբ չեն փոխում իրենց կարծիքը նոր տեղեկատվության ազդեցության տակ:⁵ Միաժամանակ, պակաս գիտակ և քաղաքականությամբ պակաս հետաքրքրվածներն ավելի անպաշտպան են ՁԼՄ-ների տարածած հնարավոր աչառու հաղորդումների առջև: Այսպիսով, քաղաքականության հանդեպ չափավոր հետաքրքրություն ունեցող, չափավոր ներգրավված քաղաքացիները կազմում են հասարակության այն ենթախումբը, որն առավել ենթակա է ՁԼՄ-ների ազդեցությանը:⁶

Ըստ ՀՌԿԿ ՏՀՆ, քաղաքականությամբ *հույժ հետաքրքրված*, այսինքն, բուռն հետաքրքրություն դրսևորող և, ամենայն հավանականությամբ, խորապես արմատացած տեսակետ ունեցող քաղաքացիների տոկոսը Հայաստանում և Ադրբեջանում մեծ չէ: Մեծամասնությունը, հետևաբար, կազմում է բնակչության այն կատեգորիան, որն, ըստ վերը բերված տեսական հիմնավորումների, առավել ենթակա է ՁԼՄ-ների ազդեցությանը: *Քիչ հետաքրքրված* կամ *բավականաչափ հետաքրքրվածները* Ադրբեջանում կազմում են 55, Հայաստանում՝ 60 տոկոս: Ուրեմն, համաձայն բերված տեսակետի, հենց այս խումբն է, որ առավել խոցելի է ՁԼՄ-ների ազդեցության իմաստով:

Գոյություն ունի ևս մեկ ուժեղ հակափաստարկ հոգուտ ավելի համընդհանուր կերպով ընդունված տեսակետի՝ ՁԼՄ-ների զարգացման վերաբերյալ: Մի խումբ գիտնականներ, դիտելով խնդիրն ավելի հոգեբանական դիրքերից, պնդում են, որ ապատեղեկացվածությունը պարզապես ՁԼՄ-ների աչառության հետևանք չէ, այլ ավելի շուտ մարդիկ են ընկալում այս կամ այն հաղորդումն իրենց արդեն իսկ ունեցած պատկերացումների համաձայն: Այսպիսով, ըստ այս փաստարկի, ազդեցության ենթակա անձինք հենց այդ պատճառով էլ հակված են «կողմնակալացնելու»:⁷

Մեր ուսումնասիրությունը հանգում է այն կարծիքին, որ Հայաստանի դեպքում այս երկու մոտեցումները միմյանց չեն հակասում: Ավելի տեղյակ և քաղաքականության մեջ ներգրավված անհատները, խնդրի մասին սեփական պատկերացում ունենալով, ավելի բժախնդիր են տեղեկատվության աղբյուր ընտրելիս

² Mughan, A. eds (2002). *Democracy and the Media: A Comparative Perspective*, New York: Cambridge University Press.

³ ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն 2007

⁴ OSCE/ODHIR Election Observation Mission (30 May, 2008). *Republic of Armenia Presidential Elections 19 February, 2008*. Warsaw. Retrieved 23 September, 2008, from http://www.osce.org/documents/odihir/2008/05/31397_en.pdf

⁵ Mughan, A. eds (2002). *Democracy and the Media: A Comparative Perspective*, New York: Cambridge University Press.

⁶ Ibid.

⁷ Lee, R., Lepper, M and Hubbard M. (1975). "Perseverance in Self-perception and Social Perceptions: Biased Attributional Processes in the Debriefing Paradigm". *Journal of Personality and Social Psychology* 32:880-92.

և եղածից քաղում են այն տեղեկությունը, որն իրենք համարում են առավել օբյեկտիվ: Համաձայն հոգեբանական տեսության, այս անձինք հակված են ճշմարիտ համարելու իրենց դիրքորոշումներն ու ենթադրությունները և դրանց մաղով են անցկացնում ստացած լրատվությունը: Այդպիսով, նրանք ընկալում են ստացած հաղորդումը որպես իրենց սկզբնական պատկերացումների հաստատում:

Ասվածը չի նշանակում, թե սխալվում են նրանք, ովքեր գտնում են, որ ՋԼՄ-ների աչառությունն ազդում է հասարակական կարծիքի վրա, անգամ լուրջ սպառողների շրջանակում: Այս երկու մոտեցումները կամ պնդումներն, անշուշտ, իրարամերժ չեն: Ֆոկուս խմբերն անհերքելի ապացույցներ են ներկայացնում այն բանի, որ ՋԼՄ-ների աչառությունը խորը կասկածամտություն, քաղաքական ակտիվության հանդեպ անտարբերություն, պետության հանդեպ անվստահություն է առաջացնում: Այն նաև վանում է ընտրանուն տեղական ՋԼՄ-ներից և ծառայում է որպես շարունակաբար ատելություն բորբոքելու միջոց: Այսպիսին է եղել և մնում ՋԼՄ-ների դերը ղարաբաղյան հակամարտության խնդրում:

Ինչևէ, ֆոկուս խմբերը ցույց են տալիս, թե ինչպես կարող են անաչառ ՋԼՄ-ները բավարարել հակամարտության վերաբերյալ բարեխիղճ տեղեկատվության սպառողի պահանջը: Անշուշտ, տեղեկատվության մատուցման ձևը կարող է նշանակալի դեր ունենալ հասարակության կողմից ղարաբաղյան հակամարտության ընկալման խնդրում, երբ երկու երկրներում էլ խիստ կարիք կա ՋԼՄ-ների այնպիսի ռազմավարության, որն ընդունելի կլինի ազգաբնակչության համար, ուր էթնիկ համերաշխությունը և աջակցությունը հակամարտության խնդրում պետության դիրքորոշմանը նորմա են: Մեր գեկույցի վերջում տրված են այդպիսի ռազմավարության համապատասխան հանձնարարականներ, տրված է նաև ավելի ընդարձակ հանձնարարական այն մասին, թե ինչպես կարող են տեղական ՋԼՄ-ները ավելի լավ մատուցել միջազգային լրատվությունը:

ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՌԿԿ-ի կողմից գործի դրված ֆոկուս խմբերի աշխատանքը, որ հենվել է նաև այլ ուսումնասիրությունների վրա և կատարվել է թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում, բացահայտել է նշանակալի ընդհանրություններ խոսքի ազատության և ՋԼՄ-ների անկախության խնդրում երկու երկրներում: Երկու կողմերի ֆոկուս խմբերի մասնակիցների բազում արտահայտություններն ու պնդումները մեկ կողմից մյուսը տեղափոխելու դեպքում համատեքստից դուրս չէին դիտվի:

Հետազոտությունը ցույց է տալիս, որ, թեպետ երկու երկրներում էլ զգալի թվով լրատվամիջոցներ են գործում, ՋԼՄ-ներում տարաբնույթ քաղաքական տեսակետներ չեն ներկայացվում: Հայաստանում ՋԼՄ-ները միատարր են, և լրագրողներն ինքնագրաքննություն են կիրառում իշխանությունների հետ բարդություններից խուսափելու նպատակով: Ադրբեջանում վիճակը նույնն է՝ մեկ բացառությամբ. այստեղ գործում են փոքրաթիվ, բայց հնչել տպագիր լրատվամիջոցներ, որոնք փորձում են այլընտրանքային տեղեկատվություն մատուցել, չնայած այն բանին, որ կառավարությանը հակադրվող կամ ընդդիմադիր տեսակետներ ներկայացնող այլակարծիք լրագրողները հաճախ հետապնդվում են իշխանությունների կողմից: Ֆոկուս խմբերի մասնակիցները համաձայն են այս հետազոտությունների եզրահանգումներին:

Հաշվի առնելով, որ երկու երկրներում էլ ՋԼՄ-ները պետական վերահսկողության տակ են գտնվում, պետական ՋԼՄ-ները ֆոկուս խմբերի կողմից աչառու են ճանաչվում: Այնուամենայնիվ, Հայաստանում ֆոկուս խմբերի մասնակիցներն ավելի մտահոգ են ՋԼՄ-ների աչառությամբ, քան Ադրբեջանում: Սրա մեկ հնարավոր բացատրությունը կարող է լինել այն, որ հայերն ավելի հետաքրքրված են ազգային և միջազգային քաղաքականությամբ, քան ադրբեջանցիները: Հայաստանի բնակչության 51 տոկոսը մասամբ, կամ *հույժ հետաքրքրված է* ազգային քաղաքականությամբ, մինչ Ադրբեջանում այդպիսիները 33 տոկոս են կազմում:⁸ Ադրբեջանում ՋԼՄ-ների աչառությամբ պակաս մտահոգության մեկ այլ բացատրությունը կարող է լինել պարզապես այն, որ այստեղ զգայացունց հարցերի մասին լրատվության պակաս կա: Ինչպես ֆոկուս խմբերի մասնակիցներն են նշում, լրատվական տարածությունը մեծ չափով զբաղեցված է շոու բիզնեսով և այլ ոչ վիճահարույց նորություններով: Եվս մեկ՝ երրորդ գործոնը, որ

⁸ ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն, 2007

կարող էր հասարակության մտահոգությունը հարուցել Հայաստանում, 2008-ի փետրվարի 19-ի նախագահական ընտրություններն են, երբ պետությունն արգելք էր դրել ոչ միայն տպագիր և հեռարձակվող ՋԼՄ-ների, այլև ինտերնետային լրատվական աղբյուրների վրա:⁹

Անկասկած՝ ինչպես հավաստում են ֆոկուս խմբերի մասնակիցները և ասվում է ամեն տեղ, նախագահական ընտրություններն Ադրբեջանում և Հայաստանում համապատասխանաբար՝ 2003 և 2008 թվականներին երկու երկրներում էլ հանգեցրեցին ՋԼՄ-ների նոր հետընթացի: Հետընտրական գործընթացի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկու երկրներում էլ ոտնահարվել են լրագրողների իրավունքները և հավելյալ արգելքներ են դրվել անկախ ՋԼՄ-ների վրա: Որոշ ուսումնասիրություններ ենթադրում են, որ իշխանություններն այդպիսի հակազդեցության դիմեցին վախենալով այն դերից, որ ունեցավ տեղեկատվության ազատ սփռումը Վրաստանում և Ուկրաինայում 2003 և 2004 թվականների «գունավոր հեղափոխությունների» ժամանակ:¹⁰ Ահա թե ինչու երկու երկրների վարչակարգերը փորձում են վերահսկել տեղեկատվության արտահոսքը, խոչընդոտելով մամուլի միջոցով ընդդիմադիր տեսակետների տարածմանը, մի բանի, որ կարող է մոբիլիզացնել զանգվածներին իրենց դեմ:

Չնայած այն բանին, որ թե՛ Հայաստանում, թե՛ Ադրբեջանում իշխանությունները վախենում էին վարչակարգի փոփոխությունից, երկու երկրների ֆոկուս խմբերի մասնակիցների մեծամասնությունը համարում են, որ Վրաստանի ՋԼՄ-ներն ավելի ազատ են և ավելի անաչառ: Սա կարելի է բացատրել այն նշանակալի քայլերով, որ երկիրը կատարել է հասարակության ազատականության ուղղությամբ, թեև դեռևս մնում են մեծ թվով դեռևս չլուծված խնդիրներ, կապված ՋԼՄ-ների և, հատկապես, հեռուստատեսության հետ: Այն կարծիքին, թե Վրաստանում վիճակն ավելի լավ է, նպաստում է նաև ընդհանուր առմամբ չեզոք, և երբեմն, դրական լրատվությունը, որ երկու երկրներում էլ հաղորդվում է Վրաստանի մասին:¹¹ Ի հակադրություն սրան, Հայաստանի և Ադրբեջանի լրատվությունը մեկը մյուսի մասին հիմնականում բացասական է և ծառայում է փոխադարձ բացասական կանխատրամադրվածության հաստատմանն ու խորացմանը: Հետաքրքիր է, որ որոշ ադրբեջանցի մասնակիցներ համարում են, որ հայկական ՋԼՄ-ներն ավելի ազատ են, քան իրենցը: Սակայն բոլոր հայաստանցի մասնակիցները բացասական պատկերացում ունեն ադրբեջանական ՋԼՄ-ների ազատության մասին:

Այնուամենայնիվ, գոյություն ունի հակադիր կողմից տեղեկատվություն ստանալու ընդհանուր հետաքրքրություն: Ֆոկուս խմբերի մասնակիցները Հայաստանում և Ադրբեջանում գտնում են, որ իրենք պետք է ավելի լավ տեղեկացված լինեն «թշնամու» մասին և հետքերոված են մեկը մյուսի քաղաքական և տնտեսական իրավիճակով: Սակայն իրենց հետաքրքրությունն արտահայտում են միայն մոդերատորների հետամուտ հարցումից հետո: Այս խնդրի վերաբերյալ գաղտնապահությունը կարիք ունի ավելի խորն ուսումնասիրության, պարզելու համար, թե արդյոք այն կապված է ինքնագրաքննադատությամբ՝ հետ, թե՞ լրատվությունն սպառող հասարակության՝ հակամարտության վրա կենտրոնացած չլինելու:

Երկու երկրների մասնակիցներն էլ անհանգստացած են, որ լրատվության մեջ Ղարաբաղը բավարար չափով չի ներկայացվում և դժգոհում են այնտեղ տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունից: Սակայն այս անհանգստության պատճառները տարբեր են: Հայաստանում մասնակիցները մտահոգված են Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի միջև աճող տարբաժանմամբ, մինչդեռ Ադրբեջանում պահանջ կա ավելի շուտ հակահայկական պրոպագանդայի, քան անաչառ լրատվության: Նրանք համարում են, որ երիտասարդ սերնդի հիշողության մեջ

⁹ Մեր զեկույցը գրվելու պահին Ադրբեջանի՝ 2008-ի նոյեմբերի նախագահական ընտրություններն արդեն ավելի, քան մեկ ամիս էր, ինչ ավարտված էին: Հետքերի կլինի համեմատել ադրբեջանական իշխանությունների անդրադարձն այս ընտրություններին Հայաստանի հետ՝ ՋԼՄ-ների պարագայում:

¹⁰ Amnesty International (2007). *Azerbaijan: The Contracting Space for Freedom of Expression*. 2007. Retrieved 24 September, 2008, from

<http://www.amnesty.org.ru/library/Index/ENGEUR550032007?open&of=ENG-AZE>

¹¹ Yerevan Press Club, Yeni Nesil Journalists Union of Azerbaijan & Black Sea Press Association (2005). *What Can a Word Do?: Materials of Armenian, Azerbaijani and Georgian Press Analysis*. Retrieved September 20, 2008, from <http://www.ypc.am/eng/?go=act/studies>

հակամարտության և Հայաստանի կողմից գրավված տարածքների մասին հիշողությունը վառ պահելով պետք է հայերի հանդեպ թշնամանք դաստիարակել նրանց մեջ:


Երկու երկրներում էլ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ լրատվության խնդրում ֆոկուս խմբերի մասնակիցներն ավելի վստահելի են համարում պաշտոնական պետական հաղորդումները, քան այլ աղբյուրները: Ինչպես քննարկված է մեր զեկույցի՝ առանձին երկրներին նվիրված բաժիններում, սա կարելի է բացատրել այն բանով, որ երկու երկրների բնակչությունն էլ հիմնականում համաձայն է հակամարտության խնդրում պաշտոնական դիրքորոշման հետ, քանի որ Լեռնային Ղարաբաղը համարվում է առանձնակի կարևորության խնդիր: Ինչպես նշում են Հայաստանի ֆոկուս խմբերի որոշ մասնակիցներ, իշխանությունները գիտեն, թե որ տեղեկատվությունը կարելի է ներկայացնել հասարակությանը, և որը կարող է վտանգել պետական անվտանգությունը:

Ամենուր Հայաստանում մասնակիցներն ավելի հանդուրժողական են աղբյուրների հանդեպ, քան աղբյուրներից՝ հայերի: Սակայն գոյություն ունի որոշ մտահոգություն, որ ՁԼՄ-ներն ատելություն են գրգռում աղբյուրների հանդեպ, նրաց բացասական կերպով ներկայացնելով: Աղբյուրներում մասնակիցներն ավելի շուտ դժգոհում են, որ ՁԼՄ-ները հայերին ներկայացնում են ոչ բավականաչափ բացասական կերպով, և որ լրագրողները չեն ստանձնում երիտասարդ սերնդի մեջ ատելություն բորբոքողների դերը:

ՀՌԿԿ ՏՀՆ-ը նույնպես ցույց է տալիս, որ հայերն ավելի հանդուրժող են աղբյուրների նկատմամբ (տես՝ աղյուսակ 1 և աղյուսակ 2): Սա կարելի է բացատրել այն փաստով, որ Հայաստանը հաղթել է պատերազմում, երկրի փոքրությամբ և հայերի՝ այլ երկրների հետ գործարարական կապեր հաստատելու պատմական հակվածությամբ: Վերջինը, հավանաբար, նաև բացատրությունն է այն բանի, որ հայերի համեմատաբար բարձր տոկոսը շահագրգիռ է թուրքիայի հետ գործարարական կապեր հաստատելու:¹²

Աղյուսակ 1


Աղբյուրներ. Վերաբերմունքը հարևանների նկատմամբ (ՀՌԿԿ



¹² Այս հարցերի հետագա ուսումնասիրությունը շատ հետաքրքիր կլիներ, սակայն այն մնում է տվյալ զեկույցի շրջանակներից դուրս:

Աղյուսակ 2

**Հայաստան. Վերաբերմունքը հարևանների նկատմամբ
(ՀՌԿԿ ՏՀՆ 2007)**



Չնայած ՋԼՄ-ների, հատկապես հեռարձակվող միջոցների հանդեպ վստահության բացակայությանը, երկու երկրներում էլ դրանք մնում են հասարակական կարծիքը սնուցող հիմնական աղբյուրը:

Ղառնալով ներածության մեջ շարադրված մեր սկզբնական պնդմանը՝ ակնհայտ է, որ ՋԼՄ-ներն ավելի լավ տեղեկատվություն մատուցելու և հասարակական կարծիքի վրա ազդելու ներուժ ունեն թե՛ Հայաստանում, և թե՛ Ադրբեջանում: Ասվածը, մասնավորապես, ճիշտ է այն շրջաններում, ուր տեղեկատվություն գոյություն չունի, կամ այն կանխավ կեղծ է համարվում, որովհետև մարդիկ չեն հավատում ՋԼՄ-ներին:

Ամեն դեպքում, արմատացած կարծիքը, անկախ նորությունների հաղորդման տեսակից, չպետք է համարել ապացուցված: Ինչպես հստակորեն երևում է ֆոկուս խմբերից, ավելի անաչառ և պրոֆեսիոնալ լրատվությունը կարող է հիմք հանդիսանալ հայերի և ադրբեջանցիների միջև հաղորդակցություն ստեղծելու համար, թեև մեկը մյուսի և դարաբաղյան հակամարտության հանդեպ կանխակալ վերաբերմունքը հաղթահարելու համար, պահանջվում է շատ ավելին, քան պարզապես ավելի լավ լրատվությունն է:

Մասն 1 Լրատվամիջոցներ

Հայաստանում գոյություն ունեն համեմատաբար մեծ թվով ինչպես պետական, այնպես և մասնավոր լրատվամիջոցներ. չորս ոչ մալուխային Հեռուստատեսային կայան, որոնց հաղորդումները տարածվում են ողջ երկրով մեկ: Ընդամենը երկրում գործում է հասարակության համար մատչելի 57 ալիք, թեև դրանց համարյա կեսը սիռլվում է միայն Երևանում: Գոյություն ունեն նաև բազում ռադիոկայաններ, սակայն դրանց դերը, բացառությամբ «Ազատություն» ռադիոկայանի վերահաղորդման, սահմանափակվում է ժամանցի ծրագրերով:¹³

Ինչպես ցույց են տալիս մի շարք ուսումնասիրություններ, Հայաստանի եթերն այլընտրանքային քաղաքական տեսակետներ չի ներկայացնում սպառողներին, թեև լրատվամիջոցները զգալի թիվ են կազմում:¹⁴ Բացի այդ, լրագրողական հետազոտությունները, մեկնաբանություններն ու վերլուծությունները, հատկապես, հեռուստատեսություն, հեշտությամբ չեն ընկալվում հասարակության մեծամասնության կողմից: Ինչպես նկատում է ֆոկլուս խմբի մի կին մասնակից.

«Լրատվամիջոցները քիչ չեն, սակայն մրցակցությունն ընթանում է ոչ թե հասարակության, այլ բուրգի գազաթի վստահությունը շահելու համար. նրանց ավելի գովաբանելով ավելի լավ ֆինանսավորում ստանալու, ավելի շատ ֆիլմեր և ծրագրեր ունենալու: Նրանք պիտի իրենց լսարանի համար աշխատեն:» (կին 18-40, Հայաստան)

Եթե մայրաքաղաքում և այլ քաղաքների բնակչության մի փոքր մասն սկսել է հետևել Ինտերնեթ-լրատվությանը, ապա վիճակն այլ է շրջաններում, ուր հեռարձակվող ՁԼՄ-ները սահմանափակվում են Հանրային հեռուստատեսությամբ, որն այստեղ մնում է տեղեկատվության միակ աղբյուրը: Երկրորդը կայանում է այն բանում, որ հասարակությունը, մի կողմից, մեծամասնաբար չվստահելով պետական ՁԼՄ-ներին, մյուս կողմից, պահպանում է կախվածությունը դրանցից, որպես տեղեկատվության աղբյուրից, քանի որ այլընտրանք չունի:

Աղբյուրի համեմատությամբ, ավելի բարձր քաղաքական ակտիվությունը և, դրա հետ մեկտեղ, ՁԼՄ-ների գնահատման միատարր բնույթը Հայաստանում, հավանաբար, հասկանալի է դարձնում, թե ինչու այստեղ վստահությունը ՁԼՄ-ների հանդեպ ամենացածրն է երեք անդրկովկասյան երկրներում:¹⁵ Հայաստանում հարցվածների միայն 25 տոկոսն են կամ *լիովին վստահում* կամ *մասամբ վստահում* ՁԼՄ-ներին:

«Ողջ աշխարհն է կողմնակալ: Ով վճարում է, նա էլ երաժշտությունն է պատվիրում: ՁԼՄ-ները ծառայում են նրանց, ով փող և իշխանություն ունի: Եվ ոչ միայն Հայաստանում. Ամերիկայում էլ ամերիկյան կողմնակալություն կա...» (տղամարդ, 18-40, Հայաստան)

«Ով ավելին է վճարում, նրա հրամանն էլ կատարվում է:» (կին 18-40, Հայաստան)

«Իշխանամետ ՁԼՄ-ներն էլ են կողմնակալ, ընդդիմադիրներն էլ:» (կին 18-40, Հայաստան)

Համեմատության համար. Վրաստանում վստահությունը ՁԼՄ-ների հանդեպ երեք երկրների մեջ ամենաբարձրն է. հարցվածների 50 տոկոսը Վրաստանում *մասամբ* կամ *լիովին* վստահում են ՁԼՄ-ներին, ի հակադրություն 9 տոկոս *լիովին* կամ *մասամբ չվստաստահողների* (Տես՝ աղյուսակ 3).¹⁶

¹³ OSCE (2006). *The State of Media Freedom in Armenia: Observations and Recommendations*. Retrieved 23 September, 2008 from http://www.osce.org/documents/oy/2007/05/24699_en.pdf.


¹⁴ OSCE/ODHIR Election Observation Mission (30 May, 2008). *Republic of Armenia Presidential Elections 19 February, 2008*. Warsaw. Retrieved 23 September, 2008, from http://www.osce.org/documents/odih/2008/05/31397_en.pdf.

¹⁵ ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն, 2007

¹⁶ Այս վիճակը կարող է զգալիորեն փոխված լինել Վրաստանում 2007-ից հետո, երբ այնտեղ իրականացվել է ՏՀՆ:

Աղյուսակ 3

Ռեպուզիցիոնների վստահությունը ՁԼՄ-ների հանդեպ - ՀՌՌԿ տվյալների հավաքագրման նախաձեռնություն 2007



Ֆոկուս խմբերի մասնակիցները հաստատեցին ՏՀՆ ուսումնասիրության արդյունքները պետական (հատկապես հեռարձակվող) ՁԼՄ-ների հանդեպ ընդհանուր անվստահության վերաբերյալ:¹⁷

«Ես չեմ հավատում հեռուստատեսությանը, որովհետև այն ամենևին չի համապատասխանում իրականությանը: Լինում են դեպքեր, երբ քո տեսածը մի բան է, իսկ նրանց հաղորդածը՝ ճիշտ հակառակը:» (կին 18-40, Հայաստան)

Բացի այդ, մասնակիցներն ավելի թերահավատ են քաղաքական, քան սոցիալական և մշակութային լրատվության հանդեպ, մի բան, որ հաստատում է այն ենթադրությունը, որ քաղաքական ակտիվության հանգամանքով է պայմանավորված Հայաստանում ՁԼՄ-ների հանդեպ վստահության ավելի ցածր մակարդակն Ադրբեջանի համեմատությամբ:

«Ես չեմ վստահում հեռուստատեսությանը քաղաքականության բնագավառում, բայց ինչ վերաբերում է այլ նյութերին, կարծում եմ, ինչ-որ օբյեկտիվ բան լինում է:» (կին 18-40, Հայաստան)

«Ես հեռուստատեսությամբ լրատվություն չեմ դիտում, միայն մշակութային լուրերը:» (կին 18-40, Հայաստան)

Ինչպես հետևում է հետազոտություններից և ուսումնասիրություններից, վստահությունը պակասում է, երբ հաղորդման նյութն ավելի հակասական է կամ, պարզապես, վատ լուր է: Պակաս ուշագրավ

¹⁷ Այս հանգամանքը բացահայտվել է ֆոկուս խմբերի կազմակերպիչների կողմից հավաքագրման ընթացքում. մարդիկ հրաժարվում էին մասնակցել քննարկումներին, որովհետև, չվստահելով ՁԼՄ-ներին, չէին ցանկանում քննարկել դրանց խնդիրը:

թեմաների պարագայում ավելի շատ հաղորդումներ են հայտնվում ընդունելի և չեզոք կատեգորիաներում և ընկալվում են առանց կանխադատության:¹⁸

Քաղաքականության և ընթացիկ իրադարձությունների լուսաբանման մեջ աչառության ակներևությունը հարց է առաջացնում այն մասին, թե այդ դեպքում, ինչ իմաստ ունի աչառությունն այդ կարգի լրատվական հաղորդումներում: Աչառությունը կարող է բխել բազում և տարատեսակ աղբյուրներից, այդ թվում՝ ուղղակիորեն լրագրողներից, ՋԼՄ-ների ղեկավարությունից, կամ պետությունից: Որպես աչառության գլխավոր աղբյուր ֆոկլուս խմբերի մասնակիցներն առանձնացնում են ՋԼՄ-ների վրա իշխանությունների վերահսկողությունը:

«Իմնական խնդիրը հիմա իշխանությունների վերահսկողությունն է:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

«Պատճառն այն է, որ ես շատ հաճախ տեսնում եմ, որ մեր ազգային ՋԼՄ-ներն իրենց սեփական քաղաքականությունը չունեն: Հատկապես հեռուստակայանները: Որոշ հեռուստակայաններ պարզապես ճնշման տակ են:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

Պետությանը պատկանող Հանրային հեռուստատեսությունը (<1) համարվում է առավել կողմնակալ իր ակնհայտ իշխանամետության պատճառով: Թեև Հայաստանում չկան պետության կողմից ֆինանսավորվող ՋԼՄ-ներին առանձնահատուկ արտոնություններ վերագրող օրենքներ, <1-ը վայելում է իշխանությունների հատուկ բարյացկամությունը: Նախ, այն ենթակա չէ լիցենզիավորման, երկրորդ, ենթակա չէ այն կարգավորումներին, որոնք մասնավոր հեռուստատեսությանը թույլատրում են գովազդին հատկացնել ոչ ավելի, քան ժամում 10 րոպե:¹⁹ Ավելին, <1-ի ղեկավար մարմնի բոլոր հինգ անդամները նշանակվում են երկրի նախագահի կողմից,²⁰ և որոշ ուսումնասիրություններ ենթադրում են, որ այս քաղաքական կախվածությունը <1-ի լրատվական հաղորդումներում օբյեկտիվության և տարատեսակության բացակայության հիմնական պատճառներից մեկն է:²¹ Ֆոկլուս խմբերի հարցվածները համաձայն են այս կարծիքին:

«<1-ի իշխանամետ լինելու փաստը կասկածից վեր է: Մարդիկ <1-ից են տեղեկանում նախագահի այցելությունների և այլ կարևոր պետական նորությունների մասին:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

«<1-ը իշխանությունների ալիքն է: Նրանք ցույց են տալիս, այն, ինչ իրենց թելադրվում է:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

<1-ի համար տեղեկատվությունն ավելի հասանելի է, ոչ միայն որովհետև հաճախ միայն այս ալիքն է պաշտոնական իրադարձությունները մեկնաբանելու թույլտվություն ստանում, այլ նաև որովհետև <1-ի բյուջեն բոլոր մյուսներից ամենաճանրակշիռն է:²² <1-ի հատկացումները պետական բյուջեից վերջին տարիներին երկրաչափական պրոգրեսիայով աճելով՝ 2006 թ. հայտարարված \$5 միլիոնից 2007-ին հասել են \$16 միլիոնի:²³ Ավելին, առնվազն մեկ զեկույց ենթադրում է, որ պետությունը ճնշում է

¹⁸ Gunther, A. C. (Summer, 1992). “Biased Press or Biased Public? Attitudes Toward Media Coverage of Social Groups”. *The Public Opinion Quarterly*. Vol. 56, No 2.

¹⁹ IREX (2008). *Media Sustainability Index (MSI) - Europe and Eurasia 2008*. Retrieved 23 September, 2008 from http://www.irex.org/programs/MSI_EUR/2008/armenia.asp

²⁰ OSCE (2006). *The State of Media Freedom in Armenia: Observations and Recommendations*. Retrieved 23 September, 2008 from http://www.osce.org/documents/oy/2007/05/24699_en.pdf

²¹ Ibid.

²² Էապես հետաքրքիր կլիներ համեմատել այլ խոշոր հեռարձակողների, օրինակ, Շանթի և Արմենիայի հետ, սակայն, ըստ այս երկու ալիքների ներկայացուցիչների, նրանց բյուջեները «առևտրային գաղտնիք» են:

²³ IREX (2008). *Media Sustainability Index (MSI) - Europe and Eurasia 2008*. Retrieved 23 September, 2008 from http://www.irex.org/programs/MSI_EUR/2008/armenia.asp

գործադրում Հայաստանի խոշոր ձեռնարկությունների վրա, պահանջելով հատկացումներ կատարել միայն Հ1-ին, այդպիսով էլ ավելի ուռճացնելով այդ ալիքի ֆինանսական միջոցները:²⁴

Քանի որ տեղեկատվության մատչելիությունը Հ1-ի համար երաշխավորված է, այն ուղղակիորեն առաջ է մղում իշխանությունների գիծը և չի հեռարձակում ո՛չ տարբեր տեսակետներ և ո՛չ էլ հարցազրույցներ այն անձանց հետ, ում կարծիքն ընդդիմադիր է պաշտոնականին: Ըստ ֆոկուս խմբերի մասնակիցների՝

«Ամոթ է, որ նրանք այդպիսի շոու են ցուցադրում Հանրային հեռուստատեսությամբ. ցուցադրում են այն, ինչ իրականության մեջ տեղի ունենալ չէր կարող:» (կին 18-40, Հայաստան)

«Ոչ, ոչ, ոչ, Հ1-ի մասին խոսք լինել չի կարող. Այն ցածրորակ և կեղծ լուրեր է հաղորդում...» (կին 40+, Հայաստան)

Այնուամենայնիվ, փաստն այն է, որ Հանրային հեռուստատեսությունն ամենաընդարձակ հեռարձակումն ունի Հայաստանում և մնում է տեղեկատվության հիմնական, եթե ոչ միակ աղբյուրը գյուղական շրջանների մեծ մասում:²⁵

Ֆոկուս խմբերի մասնակիցների հիշատակած առավել վստահելի համարվող ալիքներից (Շանթ, Կենտրոն և Երկիր մեդիա) միայն Շանթն է, որ հեռարձակվում է Երևանում և Շիրակի մարզում: Մյուսները հեռարձակվում են միայն Երևանում: Մասնակիցներն ի նկատի են առնում նաև այն, որ Հ1-ը լայնորեն դիտվում է նաև մայրաքաղաքի սահմաններից դուրս:

«Կախված է այն բանից, թե ինչպիսի տարածում ունի տվյալ ՁԼՄ-ն: Օրինակ, գյուղերում, մարզերում մարդիկ միայն Հանրային հեռուստատեսությունն են դիտում:» (կին 18-40, Հայաստան)

«Կարծում եմ, մարդիկ մեծ մասամբ Հ1 են դիտում գյուղերում:» (կին 18-40, Հայաստան)

«Առաջին ալիքը [Հ1] իշխանությունների ալիքն է: Նրանք ցուցադրում են այն, ինչ իրենց թելադրվում է, իսկ Շանթը մի քիչ ճշմարտություն է հաղորդում:» (տղամարդ, 40+, Հայաստան)

«Ես վստահում եմ Շանթին, Կենտրոնին և Երկիր մեդիային:» (կին 40+, Հայաստան)

Այնուամենայնիվ, պետության ճնշումը ՁԼՄ-ների վրա չի սահմանափակվում Հ1-ով: «Ֆրիդոմ հաուսի» մի զեկույց նշում է, որ թեև պետությունն ուղղակի վերահսկողություն կամ գրաքննություն չի կիրառում ՁԼՄ-ների հանդեպ, այն, սակայն, ուժգնորեն ազդում է, հատկապես, հեռարձակվող ՁԼՄ-ների վրա՝ ոչ ֆորմալ միջոցներով ճնշում գործադրելով դրանց սեփականատերերի վրա:²⁶ Ահա ֆոկուս խմբերի հարցվածների պնդումները, որ հաստատում են այսպիսի զեկույցները.

«Բոլոր ՁԼՄ-ներն էլ վերահսկվում են, լինեն դրանք պետական, թե մասնավոր:» (տղամարդ, 40+, Հայաստան)

²⁴ Ibid.
²⁵ OSCE (2006). *The State of Media Freedom in Armenia: Observations and Recommendations*. Retrieved 23 September, 2008, from http://www.osce.org/documents/oy/2007/05/24699_en.pdf
²⁶ Freedom House (2007). *Map of Press Freedom 2007*. Retrieved 23 September, 2008, from <http://www.freedomhouse.org/template.cfm?page=251&country=7129&year=2007>

Եթե մասնակիցները պետական վերահսկողությունը ՁԼՄ-ների գործունեությունը քննարկելիս, ապա նրանց վերաբերմունքը վերահսկողությանն ու կարգավորմանը ավելի նրբերանգված է, երբ խոսքը վերաբերում է ուղղակիորեն վերահսկողության խնդրին: Եթե ՁԼՄ-ների աշխատանքը քննարկելիս մասնակիցները չէին կենտրոնանում պետության կողմից վերահսկողության հարցի վրա, ապա վերահսկողության և կարգավորման տարանջատումը ավելի հստակ էր պետական վերահսկողության հարցը ուղղակիորեն քննարկելու ժամանակ: Թեև կարգավորման և վերահսկողության վերաբերյալ կարծիքները տարբեր ֆոկուս խմբերում տարբեր են, այնուամենայնիվ, ընդհանուր է այն տեսակետը, որ թեպետ տեղեկատվությունը պետք է բարելսիղճ լինի, բայց պետությունն էլ պիտի վերահսկի դրա մատուցումը՝ հանուն պետական անվտանգության:

«Իհարկե, նրանք պիտի վերահսկեն, քանի որ գոյություն ունեն պետական գաղտնիքներ և երկրի շահեր, որոնք ՁԼՄ-ները չպիտի հայտնեն ժողովրդին:» (կին 40+, Հայաստան)

«ՁԼՄ-ները հետևում են որոշակի սկզբունքների և շատ լավ գիտեն, թե որ տեղեկատվությունը պիտի լինի օբյեկտիվ, որը սուբյեկտիվ կամ մասամբ օբյեկտիվ, որպեսզի այն կողմնակի հետևանքներ չունենա: Ողջ տեղեկատվությունը չպիտի հրապարակվի բաց և ազատ կերպով: Դա ճիշտ չի լինի:» (կին 18-40, Հայաստան)

Տղամարդկանց 40+ խումբն ընդհանուր առմամբ համարում է, որ պետությունը պետք է վերահսկի ՁԼՄ-ներն օրենսդրության միջոցով, և այդպիսի վերահսկողությունն ընդունելի է, եթե այն իրականացվում է պետության կողմից: Տղամարդկանց 18-40 խումբը մեծամասնաբար համարում է որ պետական վերահսկողությունը ոչ միայն ընդունելի է, այլ՝ նրանցից ոմանց կարծիքով, անգամ անհրաժեշտ:

«Պետությունը պիտի վերահսկի: Այն կարող է կողմնորոշվելու իրավունք տալ ՁԼՄ-ներին օրենքի նորմերի շրջանակներում, բայց այդ վերահսկողությունը պետք է իրականացվի որևէ անաչառ և իր որոշումներում արդար մարմնի կամ կառույցի կողմից:» (տղամարդ, 40+, Հայաստան)

«Պետությունը պետք է ուշադիր լինի, որպեսզի պետության համար միջազգային հարաբերությունների առումով անբարենապաստ տեղեկատվության արտահոսք չլինի: Տեղեկատվությունը պետք է լինի բարելսիղճ, բայց ոչ՝ ի վնաս պետության:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

Պետք է ասել, որ այստեղ կարող էր որոշ թյուրըմբռնում լինել *վերահսկողություն* և *կարգավորում* բառերի շուրջ. ֆոկուս խմբերի որոշ մասնակիցներ առաջին եզրը հասկանում են երկրորդի իմաստով:²⁷ Անկախ դրանից, նրանք համոզված են, որ ժողովրդին մատուցվող տեղեկատվությունը չի կարող անսահմանափակ լինել, և որ ՁԼՄ-ների լիակատար ազատությունը կարող է քառս առաջացնել: Թեև որոշ ուսումնասիրողների կարծիքով, մամուլի ազատությունն, ի տարբերություն խոսքի ազատությունից, պետք է հարաբերական լինի՝ կախված այն բանից, թե մինչև ինչ աստիճանի կարելի է պրոպագանդել որոշ արժեքներ՝ արտահայտվելու ազատության անվան տակ,²⁸ կարգավորման գաղափարն, այնուամենայնիվ, մնում է անորոշ, և մասնակիցները լավ չեն պատկերացնում, թե ինչ կերպ կարող են կարգավորվել ՁԼՄ-ները, առանց ներկայացուցչական ժողովրդավարության հիմնական սկզբունքների ոտնահարման: Մասնակիցները նաև շեշտում են, որ պետք չէ ժողովրդին մատուցել այնպիսի տեղեկատվություն, որը կարող է բացասական հակազդեցություն առաջացնել, սակայն այս կարծիքը հստակ չի ձևակերպվում:

²⁷ Աշխատանքը շարունակելու պարագայում, հանձնարարվում է երկու հասկացությունների կոնկրետ օրինակներ ներկայացնել և յուրաքանչյուրը հետևողականորեն պարզաբանել մասնակիցների հետ անհատապես (տես՝ հավելված 3):

²⁸ Lichtenberg, J. Ed. (1990). Democracy and the Mass Media. New York: Cambridge. University Press.

Չնայած ՋԼՄ-ների հանդեպ վստահության բացակայությանը, հեռարձակվող լրատվամիջոցները հայերի 67 տոկոսի համար մնում են քաղաքական լուրերի հիմնական աղբյուրը:²⁹ Եվ, ի հակադրություն սրան՝ ռադիոն տեղեկատվության հիմնական աղբյուր է Հայաստանի բնակչության 1 տոկոսի, լրագրերը՝ 2 տոկոսի համար: Հետաքրքիր է, որ հարցվածների 22 տոկոսը պետության քաղաքականության մասին տեղեկությունները ստանում է ընտանիքի անդամներից, հարևաններից, ընկերներից: Ստացվում է, որ սոցիալական և ընտանեկան միջավայրը պետության քաղաքականության մասին տեղեկատվության երկրորդ հիմնական աղբյուրն է հեռուստատեսությունից հետո:

Ֆոկուս խմբերի երևանաբնակ մասնակիցների համար Ինտերնեթն է ծառայում որպես տեղեկատվության կենսական և վստահելի աղբյուր:³⁰

«Ես ավելի վստահում եմ թերթերին և Ինտերնեթին, որովհետև դրանք տարատեսակ տեսակետներ են ներկայացնում: Կարող ես կարդալ և ինքդ վերլուծել:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

«Ես կկամենայի ասել, որ մենք Ինտերնեթից ավելի շատ ենք օգտվում, որովհետև շատ կայքեր կան, որոնցում կարելի է Հայաստանի մասին օբյեկտիվ տեղեկատվություն գտնել:» (տղամարդ, 18-40)

Ակնհայտ է, որ մասնակիցների կողմից Ինտերնեթը հեռարձակվող և տպագիր լրատվությունից գերադասելու պատճառը Ինտերնեթում տեղեկատվության բազմազանությունն ու գրաքննության բացակայությունն է:³¹

Անհրաժեշտ է նորից նշել, որ ֆոկուս խմբերը գործել են միայն մայրաքաղաքում, որտեղ մարդիկ ավելի շատ հնարավորություն ունեն Ինտերնեթից օգտվելու: ՀՌԿԿ նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանում հարցվածների միայն 1 տոկոսն է օգտվում Ինտերնեթից պետության քաղաքականության մասին տեղեկատվություն ստանալու համար:³² Հարցվածների միայն 4 տոկոսը տանը ունի էլեկտրոնային կապ հեռախոսով, և միայն 1 տոկոսն է օգտվում DSL կամ ռադիոկապից: Այսինքն, Հայաստանում հարցվածների 86 տոկոսը Ինտերնեթից կամ էլեկտրոնային կապից օգտվելու նախնական գիտելիքներ չունի:

Թեև Ինտերնեթը և տպագիր լրատվամիջոցները որոշ վստահություն են վայելում Հայաստանում, ֆոկուս խմբերի արդյունքները ցույց են տալիս, որ վստահությունը դեպի ՋԼՄ-ները զգալի անկում է ապրել վերջին տասնամյակի ընթացքում:

2002-ին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից Ա1+ հեռուստաալիքի՝ հեռարձակման նոր թույլտվության դիմումի մեժումը³³ Հայաստանում ՋԼՄ-ների ազատության ոլորտում հետընթացի առաջին նշանակալի քայլն էր: Մինչ այդ Ա1+-ը համարվում էր այլընտրանքային, պետականից տարբեր քաղաքական տեսակետներ ներկայացնող հիմնական լրատվամիջոցը: Ըստ «Ֆրիդոմ հաուսի» 2007-ի զեկույցի, Ա1+-ի՝ եթերազրկումից հետո հեռուստակայանների մեծ մասն էլ ավելի իշխանամետ դարձան քաղաքականապես, մնացին զգուշավոր իրենց հաղորդումներում, մշտապես անտեսում են ընդդիմության տեսակետները, վախենալով Ա1+-ի բախտին արժանանալուց:³⁴

²⁹ Ibid.

³⁰ Մեր ծրագրի համար սահմանված շրջանակներում այն հարցը, թե ֆոկուս խմբերի մասնակիցները որ Ինտերնեթ կայքերից են օգտվում, չի բարձրացվել: Հանձնարարվում է, որ հետագա աշխատանքի ընթացքում ֆոկուս խմբերը զբաղվեն այս խնդրով:

³¹ Հետաքրքիր է, որ ոչ ոք չի հիշատակել Արևմուտքում տարածված այն դիտարկումը, որ Ինտերնեթով հրապարակվող նյութերը ենթակա չեն պատասխանատվության և կարող են լինել չստուգված: (տես, օրինակ՝ Vedder A. and Wachbroit A. (October 28, 2004). "Reliability of information on the Internet: Some distinctions". *Ethics and Information Technology*. Volume 5, No 4. pg 211-215.)

³² ՀՌԿԿ, 2007

³³ ՀՌԱՀ-ի անդամները նշանակվում են նախագահի կողմից:

³⁴ Freedom House (2007). *Map of Press Freedom 2007 -Armenia*. Retrieved 23 September, 2008, from <http://www.freedomhouse.org/template.cfm?page=251&country=7129&year=2007>

2008-ի փետրվարի նախագահական ընտրություններն ու հետընտրական իրադարձությունները ևս մեկ հարված հասցրեցին ՋԼՄ-ներին: Սերժ Սարգսյանին (այն ժամանակ՝ վարչապետ) նվիրված բարենպաստ հաղորդումները և, ընդհակառակը՝ ամբողջապես մերժողական հաղորդումները մյուս թեկնածուների մասին զգալիորեն բարձրացրեցին ընտրությունների շուրջ գոյություն ունեցող լարվածության մակարդակը: Ըստ ԵԱՀԿ/ԺՄԻԳ³⁵ Ընտրությունների դիտորդական առաքելության՝ նախագահական ընտրությունների մասին զեկույցի, պետական Հ1-ը թեկնածուների հանդեպ հավասար վերաբերմունք չի ունեցել, թեև նրանց ընտրարշավին հավասարակշիռ եթերաժամանակ է հատկացրել իր լրատվական հաղորդումներում: Ավելին, թեև գլխավոր ընդդիմադիր թեկնածուին՝ նախկին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին ամենաշատ ժամանակն է հատկացվել ողջ եթերաժամանակի բաժանման առումով, այդ լրատվությունը մեծ մասամբ բացասական է եղել: Հանրային ռադիոն ևս նման մոտեցում է ունեցել, իսկ պետական՝ Հայաստանի Հանրապետություն թերթը հստակորեն գերադասողական և, հիմնականում, դրական լրատվություն է հաղորդել Սրագսյանի մասին իր՝ ընտրություններին նվիրված տպագիր ծավալի շուրջ 45 տոկոսում:³⁶

Մասնակիցները համաձայն են, որ ՋԼՄ-ների հանդեպ վստահությունն ավելին է եղել Հայաստանի անկախացման անմիջապես հաջորդած տարիներին, և որ այդ վստահությունը կտրուկ անկում է ապրել 1999 թվականից, և հատկապես, 2008 թվականի նախագահական ընտրություններից հետո:

«Երևի 1999-ից առաջ ավելի լավ էր: Մենք ողջ ընտանիքով դիտում էինք և հավատում էինք: Հիմա դիտում ենք և չենք հավատում:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

«Կարծում եմ, 1998-ին ավելի լավ էր, քան հիմա: Փոխվում է դեպի վատը:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

«Ես ավելի հավատ ունեի մինչև ընտրությունները: Հիմա, կարծում եմ, ավելի են ճնշում վերևից:» (կին, 18-40, Հայաստան)

Հարցվածները ոչ միայն համարում են, որ մամուլի ազատությունը պակասել է Հայաստանում, այլև գտնում են, որ Վրաստանում ՋԼՄ-ները, թեկուզև որոշ թրություններով, ներկայումս, այնուամենայնիվ, ավելի ազատ են, քան Հայաստանում և Ադրբեջանում:

«Վրաստանում [...] մեզանից ավելի առաջ են: Այնտեղ ոչ միայն խոսքի ազատություն կա, այլև բռնություն և կաշառակերություն չկա: Մարդիկ գիտեն, որ օրենքը խախտելու համար կպատժվեն: Ավելի նման է Եվրոպային:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

Ոմանք, այնուամենայնիվ, պնդում են, որ Վրաստանն ու Հայաստանը հավասար են, և որ Ադրբեջանն է հետ մնում:

«Կարծում եմ, Հայաստանն ու Վրաստանը նույնն են, բայց Ադրբեջանը հետ է մնում: Բողոքները Վրաստանում վերջին նախագահական ընտրությունների ընթացքում վկայում են խոսքի ազատության մակարդակի մասին, կամ, առնվազն, այն մասին, որ այնտեղ պայքարում են խոսքի ազատության համար: Դա ակնհայտորեն երևում էր հեռուստատեսությամբ:» (տղամարդ, 40+, Հայաստան)

Փոքրաթիվ բացառություն են կազմում այնպիսիք, ովքեր գտնում են, որ Հայաստանում ՋԼՄ-ներն ավելի ազատ են:

³⁵ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն/Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
³⁶ OSCE/ODHIR Election Observation Mission (30 May, 2008). Republic of Armenia Presidential Elections 19 February, 2008. Warsaw. Retrieved 23 September, 2008, from http://www.osce.org/documents/odihr/2008/05/31397_en.pdf

«Կարծում եմ, Հայաստանում ավելի շատ խոսքի ազատություն կա, և ավելի քիչ վերահսկողություն և կարգավորում պետության կողմից, քան Ադրբեջանում և Վրաստանում.» (տղամարդ, 40+, Հայաստան)

Երևի, ծայրագույն կասկածամտություն են արտահայտում այն մասնակիցները, ովքեր գտնում են, որ երեք երկրներից և ոչ մեկում խոսքի ազատություն չկա:

«Խոսքի ազատություն չկա. ո՛չ Հայաստանում, ո՛չ Վրաստանում, ո՛չ էլ Ադրբեջանում.» (տղամարդ, 40+, Հայաստան)

Իհարկե, Հայաստանի ֆոկուս խմբերի մասնակիցները համարում են, որ երեք հանրապետությունների մեջ Ադրբեջանն ամենաանազատն է:

«Նրանք [Ադրբեջանը] ավելի շատ են խոսում իրենց նախագահի մասին հեռուստատեսությամբ: Դա կարգավորվում է պետության կողմից: Նրանք լավ լուրեր են հաղորդում, բայց դա չի նշանակում, որ այնտեղ խոսքի ազատություն կա.» (կին, 18-40, Հայաստան)

Ձեռքի տակ եղած ուսումնասիրությունների եզրակացությունն այն է, որ երեք հանրապետություններում էլ ՁԼՄ-ները համարժեք հաղորդումներ չեն տալիս հարևան երկրներում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Եթե վրացական և հայկական ՁԼՄ-ները հիմնականում զգուշանում են միմյանց մասին բորբոքիչ հոդվածներ հրատարակելուց, ապա հայկական և ադրբեջանական տպագիր լրատվամիջոցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաղորդումների մեծ մասը փոխադարձաբար անհանդուրժողական և անբարյացկամ է:³⁷ Պետք է ենթադրել, որ հայկական ՁԼՄ-ների կողմից Ադրբեջանի մասին հաղորդվող հիմնականում բացասական լրատվությունն էլ իր հերթին է տրամադրել հայ մասնակիցներին համարելու, որ այնտեղ մամուլի ազատություն չկա, քանի որ դժվար թե նրանք իրենք ադրբեջանական հեռուստատեսությանը ծանոթ լինեն: «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ» Հայաստանում ներկայացուցիչ Արթուր Պապյանը նույնպես հաստատում է, որ «Ադրբեջանական հեռուստատեսության հաղորդումները որևէ ազդեցություն չունեն Հյաստանյան ՁԼՄ-ների համայնապատկերի վրա»:³⁸

Մասն 2. Հաղորդումներ

Ֆոկուս խմբերի մասնակիցների դժգոհությունը ՁԼՄ-ների վերահսկողությունից և դրանց աչառու հաղորդումներից վերաբերում է ոչ միայն տեղական լուրերին, այլև միջազգային լրատվությանը:

«...հայկական ՁԼՄ-ներն իրենց տեղեկատվությունը վերցնում են այլ ալիքներից: Հաճախ մենք տեսնում ենք այլ ալիքների լոգոները, օրինակ՝ ՀՌՀ ((OPT) լուրերի հաղորդումներում): Նշանակում է, նրանք, պարզապես, վերցնում են արդեն գոյություն ունեցող նյութը, և եթե այնտեղ արդեն տեղեկատվության բաց կա, կամ ինչ-որ բան ձիշտ չէ, ապա մենք ամբողջապես թյուր տեղեկատվություն ենք ստանում.» (տղամարդ, 18-40, Հայաստան)

«... մեր թղթակիցներն իրենք քիչ տեղեկատվություն են ստանում միջազգային իրադարձությունների մասին՝ դրամական միջոցների սղության պատճառով: Եվ իրենց ունեցած տեղեկատվության մեծ մասն այլ տեղեկատվական ալիքներից է.» (տղամարդ, 40+, Հայաստան)

³⁷ Yerevan Press Club, Yeni Nesil Journalists Union of Azerbaijan & Black Sea Press Association (2005). *What Can a Word Do? Materials of Armenian, Azerbaijani and Georgian Press Analysis*. Retrieved September 20, 2008, from <http://www.ypc.am/eng/?go=act/studies>

³⁸ Էլ-փոստով նամակագրություն «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի» Հայաստանում ներկայացուցիչ Արթուր Պապյանի հետ, Հայաստան, 17 հոկտեմբեր 2008.

«Ես չեմ ուզում ասել, որ նրանք դա դիտմամբ են անում: Պարզապես, նրանց մասնագիտական մակարդակը շատ ցածր է:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

Այս մեջբերումները վերհանում են միջազգային լրատվության հաղորդումներից դժգոհության մի քանի պատճառ, մասնավորապես.

1. Լրագրողների մասնագիտական ցածր մակարդակը;
2. նորությունների՝ օտար ալիքներից քաղված լինելը և դրանք առանց մեկնաբանությունների, կամ ոչ համարժեք մեկնաբանություններով մատուցելը;
3. միջազգային լուրերի հաղորդելու համար ՋԼՄ-ների՝ նյութական միջոցներ չունենալը;
4. ինքնագրաքննության կիրառումը լրատվության տեսակի ընտրության գործում:

Հայաստանի ՋԼՄ-ների՝ Այռեքս (IREX, միջազգային հետազոտությունների և փոխանակումների խորհուրդ) կազմակերպության կողմից կատարված մի ուսումնասիրության համաձայն, նորությունների հաղորդումները երբեմն ստիպված են անտեսել բարոյականության կանոնները, որովհետև չունեն համապատասխան դրամական միջոցներ՝ տեղեկատվությունը տարբեր աղբյուրների հետ համեմատելու, փաստերը ճշգրտելու և ստուգելու համար:³⁹ Իրականում այս աշխատանքը համեմատաբար սակավարժեք է, և խնդիրը կայանում է այն բանում, թե ինչպես կարելի է խթանել այս կարգի վարքագիծը: Ինչպես ասված է մեր զեկույցի հանձնարարականների բաժնում, իրավիճակը կարգի բերելու համար ավելի կարևոր են կամավոր ընդունված բարոյական կոդեքսը և այն կիրառողների համայնքի գոյությունը, քան պարզապես՝ դրամը:

Բացի հաղորդումների որակից, մասնակիցները սովորաբար դժգոհում են նաև միջազգային լրատվությունից ընտրված նյութերից: Օրինակ, նրանք գտնում են, որ այն երկրները, որտեղ մեծ հայկական համայնքներ կան, պետք է ավելի լայնորեն ներկայացվեն միջազգային լրատվության մեջ:

«Այն երկրներում, որտեղ մեծ հայկական համայնքներ կան: Յուրաքանչյուր հայ, որ երկրում էլ որ ապրի, պիտի զգա, որ ինքն իր հայրենիքի մի մասն է:» (կին, 40+, Հայաստան)

Հետաքրքիր է, որ տղամարդ մասնակիցները նշում են, որ միջազգային լրատվությունը պիտի ավելի շատ անդրադառնա Թուրքիային և Ադրբեջանին, որպեսզի հասարակությունը տեղեկացված լինի այն երկրների մասին, որնց հետ Հայաստանը հակամարտության մեջ է:

«Ես կցանկանայի, որ ՋԼՄ-ները կենտրոնանային երկու թշնամի երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի վրա: Մենք նրանցից ամեն տեսակ թշնամական գործողություններ կարող ենք սպասել: Նրանք զինվում են և բազմապատկում իրենց ռազմական բյուջեն. ի վերջո, որքան լավ ես ճանաչում թշնամուդ, այնքան ավելի հեշտությամբ կհաղթես նրան:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

Որոշ կին մասնակիցներ հիմնականում համաձայն են, որ Ադրբեջանը ՋԼՄ-ներում վատ է ներկայացվում, և գտնում են, որ դա արդյունք է ՋԼՄ-ներում իշխող աջառության և ինքնագրաքննադատության: Նրանք նաև գտնում են, որ բացասական լրատվությունն ատելություն է սերմանում երկու երկրների միջև:

«Կարող եմ ասել, որ Ադրբեջանը վատ է ներկայացված ՋԼՄ-ներում, և որ դրանք [ՋԼՄ-ները] փորձում են մի տեսակ ատելություն առաջացնել... Չեմ հասկանում:» (տղամարդ, 40+, Հայաստան)

«Մեր նորությունների գործակալություններն այնպիսի տեղեկատվություն են հաղորդում, որը չի համապատասխանում իրականությանը: Նրանք կարող են

³⁹ IREX (2008). *Media Sustainability Index (MSI) - Europe and Eurasia 2008*. Retrieved 23 September, 2008, from http://www.irex.org/programs/MSI_EUR/2008/armenia.asp

խոսել ադրբեջանցիների մասին, բայց նրանց ասածը կարող է չհամապատասխանել իրականությանը...» (կին, 18-40, Հայաստան)

«Գուցե նրանք ցանկանում են ասել ճշմարտությունը, բայց նրանց թույլ չեն տալիս:»
(տղամարդ, 40+, Հայաստան)

Այսուամենայնիվ, բացառությամբ 18-40 խմբի տղամարդկանց, որոնք անհատ ադրբեջանցիներին թշնամի են համարում և գտնում են, որ նրանք պետք է համապատասխան կերպով ներկայացվեն, մասնակիցները հիմնականում հանդուրժողական դիրքորոշում են դրսևորում: Նրանք հակամարտության մեղքը վերագրում են քաղաքականությանը և գտնում են, որ շարքային քաղաքացիները պատերազմ չեն ուզում:

«Հասարակ ժողովուրդը՝ հայ, վրացի, կամ ադրբեջանցի, երբեք թշնամությամբ չեն վերաբերվել միմյանց և երբեք թշնամի չեն լինի: Դա արվել է արհեստականորեն, քաղաքական նպատակներով...» (կին, 40+, Հայաստան)

«Ադրբեջանցիները մեզ նման սովորական ժողովուրդ են:» (տղամարդ, 40+, Հայաստան)

«Ժողովուրդները թշնամի չեն: Նրանց թշնամացնում են: Սա քաղաքականություն է: Եթե պետությունները ցանկանան բարեկամության խնդիրը լուծել, ապա կարող են անել դա մի քանի ամսում:» (տղամարդ, 40+, Հայաստան)

Ընդհանուր առմամբ, բոլոր մասնակիցները, ներառյալ տղամարդիկ, գտնում են, որ Ադրբեջանի մասին ավելի շատ տեղեկատվության կարիք կա: Սակայն այնտեղից նորություններ ստանալու կարևորությունը հիշատակվել է միայն մի քանի խմբերում: Ավելին, այսպիսի պատասխանները ստացվում են միայն մոդերատորի կողմից հարցադրման արդյունքում:

«Մենք կարող ենք թշնամի մնալ, բայց մենք պիտի նրանց մասին տեղյակ լինենք: Դա կարևոր է:» (կին, 18-40, Հայաստան)

«Շատ կարևոր է Ադրբեջանի մասին լրատվություն ունենալը, որպեսզի մենք տեղյակ լինենք մեր հարևանի մասին, որը թշնամի երկիր է:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

Ավելի ապահով սահմաններ ունենանլու նպատակով ժողովրդին ավելի բարեխիղճ տեղեկատվություն մատուցելու անհրաժեշտությունը հակասում է այն գաղափարին, որ պետությունը պետք է կարգավորի այս կարգի տեղեկատվությունը: Այսպիսի հակադիր դիրքորոշումները վկայում են որոշակի խնդիրների վերաբերյալ կայուն հասարակական կարծիքի բացակայության, ինչպես նաև ԶԼՄ-ների գործունեության մասին դիրքորոշումներ կառուցելու անկարողության մասին. մի թեմա, որին կանդրադառնանք մեր զեկույցի հանձնարարականների բաժնում:

Ֆոկուս խմբերի մասնակիցները դժգոհ են նաև այն բանից, որ Հայաստանի բնակչությունը տեղեկություն չունի Լեռնային Ղարաբաղի իրավիճակի մասին և մտահոգված են Հայաստանի և Ղարաբաղի միջև աճող անջրպետով:⁴⁰

«Ես համոզված եմ, որ ադրբեջանցիք քաջատեղյակ են Ղարաբաղի և Հայաստանի իրավիճակի մասին: Կարող ենք եզրակացնել, որ տեղեկատվությունը զաղտնի է միայն մեր ժողովրդի համար: Ադրբեջանում շատ լավ գիտեն այն ամենն ինչ իրենց անհարաժեշտ է:» (կին, 18-40, Հայաստան)

⁴⁰ Բնակչության վերաբերմունքը Ղարաբաղի և հայաստանյան քաղաքականության մեջ ներգրավված ղարաբաղցիների հանդեպ մեր զեկույցի նյութը չէ, թեև արժանի է լրացուցիչ ուսումնասիրության:

«... մենք տեղեկություն չունենք այն մասին, թե ինչ է կատարվում Ղարաբաղում: Որոշ թշնամություն կա Ղարաբաղի և Հայաստանի ժողովրդի միջև, հատկապես երիտասարդ սերնդի մեջ: Սա այսպես է, որովհետև ՁԼՄ-ները մեզ չեն հայտնում, թե ինչ է կատարվում Ղարաբաղում, ինչ են մտածում նրանք և ինչպես են վերաբերվում մեզ: Նույնը կարելի է ասել Ղարաբաղի մասին՝ Հայաստանի վերաբերյալ:»
(տղամարդ, 18-40, Հայաստան)

Եվս մեկ անգամ. այս կարծիքները վկայում են Լեռնային Ղարաբաղի մասին հաղորդվող լուրերի վերաբերյալ հայերի հակասական տեսակետները: Մի կողմից, նրանք անհանգստանում են, որ չափազանց շատ տեղեկատվությունը կարող է օգտագործվել իրենց դեմ, սակայն մյուս կողմից, գոյություն ունի այն կարծիքը, թե ադրբեջանցիք արդեն իսկ բավական տեղեկություն ունեն, և Հայաստանի ժողովուրդն է, որ խարխալում է խավարում, չգիտենալով, թե ինչ է տեղի ունենում Լեռնային Ղարաբաղում:

Այն մասին, թե ինչպես են հայերն ընկալում Լեռնային Ղարաբաղը, լրացուցիչ տեղեկություններ քիչ կան: Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի կատարած մի ուսումնասիրության համաձայն, 29.6 տոկոսը բավարարված չեն իրենց ստացած տեղեկատվությամբ և ջանում են ավելին ձեռք բերել այլ աղբյուրներից: Եվս 35 տոկոսը բավարարված չեն ղարաբաղյան հակամարտության կարգավորման պրոցեսի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությամբ, բայց տեղեկատվության այլ համապատասխան աղբյուր չունեն:⁴¹

Ինչևէ, դեռևս ջանքեր են պետք ավելի լավ հասկանալու համար այս տեղեկատվությունը, ինչպես նաև պարզելու, արդյոք հակասու՞մ է այն ֆոկուս խմբերից հավաքված քանակական նյութերին, թե՞ ժխտում է դրանք: Թեև շատ մասնակիցներ համարում են, որ իրենք տեղեկություն չունեն այն մասին, թե ինչ է կատարվում Լեռնային Ղարաբաղում, նրանք հակված են վստահելու լրատվության պաշտոնական աղբյուրներին այս հարցում:

«Ես ընդունում եմ պետության մոտեցումը:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

«Ես կարող եմ հավատալ անկախ աղբյուրներին, բայց մենք պետք է հավատանք պաշտոնական տեղեկատվությանը, երբ լսում ենք այն: Որպես այս պետության քաղաքացի, ես պետք է հավատամ պաշտոնական տեղեկատվությանը:»
(տղամարդ, 18-40, Հայաստան)

«Ի հարկե. և սխալ կլինեք պաշտոնական տեղեկատվությունը սուտ համարելը: Ես չեմ կարծում, որ հեռուստատեսությունն այնպիսի մարմին է, որ ամեն սուտ կարելի լինի անցկացնել այնտեղ:» (տղամարդ, 18-40, Հայաստան)

Հարցմանը պատասխանող հայերի այս ակնհայտորեն հակասական կարծիքների հավաքծոյի որոշ օրինակներ կարելի է բացատրել այն փաստով, որ Լեռնային Ղարաբաղի ստատուսի վերաբերյալ մինչ այժմ բավարար քննարկումներ տեղի չեն ունենում: Ազգաբնակչությունը հիմնականում համամիտ է պետության դիրքորոշմանը և այդ պատճառով ավելի շուտ ընդունում է Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի վերաբերյալ տեղեկատվությունն առանց կանխակալ գնահատականի: Այսուամենայնիվ, նրանք կցանկանային ավելի շատ տեղեկատվություն ստանալ, անկախ այն բանից, վերահսկվում է այդ տեղեկատվությունը պետության կողմից, թե ոչ:

⁴¹ Armenian Center for National and International Studies (2005). *The Karabakh story: 17 years in progress*. Retrieved October 6, 2008, from http://www.acnis.am/pr/karabakh_story/Socio12eng.pdf

ԱՂՐԵՋԱՆ

Մասն 1 Լրատվություն

Աղրբեջանի՝ Խորհրդային Միությունից անկախանալուց հետո, երկրի ՋԼՄ-ները, դուրս գալով պետական համակարգից, վերածվեցին տարատեսակ նոր լրատվական ծառայությունների: Գոյություն ունի մեկ պետական, մեկ հանրային, և չորս մասնավոր հեռուստատեսային և ռադիո ընկերություն, որոնք հեռարձակում են ողջ երկրի տարածքով: Բացի դրանից, երկրում գործում են 6 ռեգիոնալ հեռուստատեսային և ռադիո ընկերություն,⁴² գոյություն ունի 2000 գրանցված թերթ, որոնցից իրականում գործում է միայն 180-200:⁴³ Սակայն, չնայած լրատվամիջոցների առատությանը, քաղաքական բազմակարծությունն արտահայտված չէ, և ՋԼՄ-ների անկախությունը գնալով նվազում է:

ՋԼՄ-ների մեծամասնությունն իշխանամետ է, իսկ գոյություն ունեցող փոքրաթիվ անկախ ՋԼՄ-ները մշտապես ճնշումների են ենթարկվում իշխանությունների կողմից:⁴⁴ Ինչպես նշում է Աղրբեջանում ԱՄՆ ՄԶԳ/Այռեքս (Միջազգային հետազոտությունների և փոխանակումների խորհուրդ) ՋԼՄ-ների զարգացման ծրագրի՝ թիմի ղեկավարի տեղակալ Շահին Աբասովը՝ «Աղրբեջանի ՋԼՄ-ները համատարած կերպով վերահսկվում են պետության կողմից: Բոլոր հեռուստատեսային ալիքներն ամբողջովին վերահսկվում են իշխանությունների կողմից: Նույնը վերաբերում է և տեղական ռադիոյին:»⁴⁵

«Մեր դեպքում, չնչին բացառություններով, համարյա բոլոր ՋԼՄ-ներն անկախ չեն: Գոյություն ունեն իշխանամետ և ընդդիմադիր ՋԼՄ-ներ: Իշխանամետ ՋԼՄ-ները լուրերում չափազանցություններ են հաղորդում, իսկ ընդդիմադիր ՋԼՄ-ները ստեր և հերյուրանքներ են գրում:» (տղամարդ, 18-40, Աղրբեջան)

«ՋԼՄ-ները նեկայացնում են որոշակի խմբավորումների շահերը, և ոչ թե ազգային արժեքները:» (տղամարդ, 40+, Աղրբեջան)

«Աղրբեջանի այսօրվա ՋԼՄ-ները բաժանված են երկու մասի՝ իշխանամետ և ընդդիմադիր:» (կին, 40+, Աղրբեջան)

«Աղրբեջանում դրանք բաժանված են երկու կողմի, և, իշխանամետ, թե ընդդիմադիր՝ համարյա ոչ մեկն էլ օբյեկտիվ չի: Նրանք երկու ճակատների համար են պայքարում և փող են աշխատում թերթեր հրատարակելով:» (տղամարդ, 18-40)

Հետքերի է, որ ՋԼՄ-ներում արտահայտված տարակարծությունը մասնակիցների կողմից ընկալվում է թերահավատությամբ և կասկածամտությամբ. տարբեր խնդիրների շուրջ այլակարծությունն ընկալվում է որպես ապատեղեկատվություն:

«Հնարավոր չէ հիմնվել դրանցից [ՋԼՄ-ներից] որևէ մեկի վրա: Մի մասը մի բան է ասում, մյուսը՝ ուրիշ:» (կին, 18-40, Աղրբեջան)

«Դժվար խնդիր է: Նրանք բոլոր տարբեր բաներ են հաղորդում, և կարելի է մոլորվել:» (կին, 18-40, Աղրբեջան)

⁴² Yunusova, L. *Freedom of Word and Mass Media in Azerbaijan* (2007). Retrieved 20 October, 2008 from http://www.osce.org/documents/odihr/2007/10/27014_en.pdf

⁴³ Ibid.

⁴⁴ Human Rights Watch Briefing Paper (2004). *Media, the Presidential Elections and the Aftermath*. Retrieved 3 October, 2008, from http://www.hrw.org/backgrounder/eca/azerbaijan/2004/1.htm#_Toc79222789

⁴⁵ Էլեկտրոնային թղթակցություն Աղրբեջանում Այռեքս ՋԼՄ-ների զարգացման ծրագրի՝ թիմի ղեկավարի տեղակալ Շահին Աբասովի հետ, հոկտեմբեր 21, 2008:

Ազգային ՁԼՄ-ների հանդեպ այսպիսի թերահավատությունը հակում է ֆոկուս խմբերի մասնակիցներից շատերին վստահելու թուրքական ալիքներին, ինչպես նաև միջազգային լրատվական ալիքներին՝ լրատվություն ստանալու պարագայում: Ֆոկուս խմբերի համընդհանուր կարծիքը կարելի է ներկայացնել մասնակիցներից մեկի խոսքերով.

«Թուրքական ՁԼՄ-ները լրատվություն են տալիս և ավելի լավ վերլուծություն են ներկայացնում ժողովրդին, հատկապես, թերթերն ու հեռուստատեսությունը:»
(տղամարդ, 18-40, Ադրբեջան)

Թուրքական ՁԼՄ-ների ժողովրդայնությունն Ադրբեջանում կարելի է բացատրել երկու լեզուների նմանությամբ և երկու երկրների միջև ամուր մշակութային և էթնիկ կապերի առկայությամբ: Այսուամենայնիվ, թուրքական ալիքների դերը սահմանափակ է, քանի որ դրանք կարելի է ընդունել միայն մալուխով կամ արբանյակային ալեհավաքով:⁴⁶ Ըստ ՀՌԿԿ ՏՀՆ, ադրբեջանցիների միայն 22 տոկոսն արբանյակային ալեհավաք ունի, և 14 տոկոսը՝ մալուխային հեռուստակապ:⁴⁷ Բացի այդ, պետք է հաշվի առնել նաև այն, որ թեպետ թուրքական ՁԼՄ-ները կարող են դիտվել որպես միջազգային լուրերի վստահելի աղբյուր, դրանք միևնույն է՝ նվազագույն չափով են անդրադարձնում Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի իրադարձություններին:⁴⁸

Իհարկե, բացի թուրքական ՁԼՄ-ներից, ադրբեջանցիների, հատկապես, բաքվեցիների համար տեղեկատվության այլընտրանքային աղբյուր է Ինտերնեթը: Եվ այն դիտվում է որպես վստահելի աղբյուր ֆոկուս խմբերի մասնակիցների մեծամասնության կողմից:

«Պետությունը չի կարող խանգարել Ինտերնեթին:» (18-40, Ադրբեջան)

«Ես հիմնականում օգտվում եմ Ինտերնեթից, որովհետև Ադրբեջանում գործող մենաշնորհի պայմաններում այլ աղբյուրներից օգտվելը պարզապես ժամանակ վատնել է: Աշխատում եմ տեղեկանալ Ինտերնեթից՝ ադրբեջաներեն, ռուսերեն կամ անգլերեն:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

Այնուամենայնիվ, Ինտերնեթը հիմնականում շարունակում է մնալ քաղաքաբնակների, այն էլ՝ դրանց փոքրամասնության արտոնությունը: Ըստ ՀՌԿԿ ՏՀՆ, Ադրբեջանում հարցվածների միայն 1 տոկոսն է օգտվում Ինտերնեթից՝ որպես ազգային քաղաքականության մասին տեղեկատվության առաջին աղբյուրից:⁴⁹ Այդուհանդերձ, մեկ այլ ուսումնասիրության համաձայն, Ադրբեջանում Ինտերնեթից օգտվելու արժեք չկա, թեև միայն խոշոր քաղաքների բնակչության 10 տոկոսն ունի այդ հնարավորությունը:⁵⁰

Հետևաբար, չնայած պետական վերահսկողությանն ու հանրության թերահավատությանը ՁԼՄ-ների հանդեպ, հեռարձակվող ՁԼՄ-ները մնում են ազգային քաղաքականության վերաբերյալ տեղեկատվության միակ աղբյուրը Ադրբեջանի բնակչության 79 տոկոսի համար:⁵¹ Սա, միգուցե, ցույց է տալիս Ադրբեջանում քաղաքացիների մեջ տպագիր լրատվամիջոցների հանդեպ հետաքրքրության որոշակի բացակայությունը:

«Կարծում եմ, թերթերը գերադասելի են այլ ՁԼՄ-ներից: Դրանք կարող են ուշացումով հասնել, կամ հնացած տեղեկություններ հաղորդել, բայց, այնուամենայնիվ, մարդիկ թերթ կարդում են:» (կին, 18-40, Ադրբեջան)

⁴⁶ Էլեկտրոնային թղթակցություն Ադրբեջանում Այռեքս ՁԼՄ-ների զարգացման ծրագրի՝ թիմի ղեկավարի տեղակալ Շահին Աբասովի հետ, հոկտեմբեր 21, 2008:

⁴⁷ ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն, 2007

⁴⁸ Էլեկտրոնային թղթակցություն Ադրբեջանում Այռեքս ՁԼՄ-ների զարգացման ծրագրի՝ թիմի ղեկավարի տեղակալ Շահին Աբասովի հետ, հոկտեմբեր 21, 2008:

⁴⁹ ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն, 2007

⁵⁰ Human Rights Watch Briefing Paper (2004). *Media, the Presidential Elections and the Aftermath*. Retrieved 3 October, 2008, from http://www.hrw.org/backgrounder/eca/azerbaijan/2004/1.htm#_Toc79222789

⁵¹ ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն, 2007

Որոշ ուսումնասիրություններ նաև հաստատում են, որ լրագրերը հաճախ ուշացումով են տեղ հասնում, և որ լուրերն առաջին հերթին ստացվում են Բաքվում գտնվող հեռուստակայաններից:⁵² Այս պատկերը առանձնապես հատկանշական է երկրի շրջանների համար: ՀՌԿԿ ՏՀՆ նյութերը ցույց են տալիս նաև, որ լրագրերն Ադրբեջանում ժողովրդայնություն չեն վայելում. հարցվածների միայն 2 տոկոսն է օգտվում տպագիր լրատվամիջոցներից, ազգային քաղաքականության մասին նորություններ իմանալու համար:⁵³

«Կարծում եմ, փաստերն ավելի բարեխղճորեն են ներկայացվում հեռուստատեսությամբ: Դա է պատճառը, որ հեռուստատեսությունը գերակշռում է: Հեռուստատեսությունն ավելի շատ լուր է հաղորդում, քան լրագրերը:» (կին, 40+, Ադրբեջան)

Այս իրավիճակի հիմնական պատճառներից է այն, որ լրագրերը սահմանափակ շրջանառություն ունեն: Ինչպես նշում է մի ՋԼՄ դիտորդ, «Երկրում կան որոշ ընդդիմադիր լրագրեր, բայց տպագիր լրատվամիջոցների արտադրությունն Ադրբեջանում լուրջ անկում է ապրում. լրագրերի շրջանառությունը չափազանց ցածր է, և սա է պատճառը, որ մամուլը նշանակալի դեր չունի հասարակական կարծիքի ձևավորման գործում:»⁵⁴

Բացի այդ, որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ տպագիր լրատվամիջոցները ժողովրդայնություն չեն վայելում ոչ միայն սահմանափակ շրջանառության, այլև աչառության և պետության կողմից վերահսկվելու պատճառով:⁵⁵ Պետությունը վերահսկում է նաև գլխավոր հրատարակչությունները, ինչպես նաև ժամանակ առ ժամանակ ձնշում է գործադրում ավելի փոքր, անկախ տպարանների վրա, պահանջելով չտպագրել անկախ լրագրեր և ամսագրեր: Ավելին՝ պետական պաշտոնյաները հաճախ անկախ ՋԼՄ-ների թղթակիցներին զրկում են տեղեկատվություն ստանալու հնարավորությունից: Ոստիկանությունը հալածում և ծեծի է ենթարկում այն լրագրողներին, ովքեր տեղեկացնում են ընդդիմադիր կուսակցությունների գործունեության և բողոքների մասին:⁵⁶

Ֆոկուս խմբերի մասնակիցները, կարծես թե, համաձայն են, որ անկախանալուց անմիջապես հետո ՋԼՄ-ներն ավելի ազատ են եղել, բայց համարում են, որ դրանք աստիճանաբար դարձել են ավելի աչառու և ժամանակի հետ է՛լ ավելի են վերահսկվում պետության կողմից:

«1989 – 2005-ը ես հավատում էի: Հետո վերահսկողությունն ավելի ուժգնացավ:» (կին, 40+, Ադրբեջան)

«Վերջին երկու-երեք տարիներին գոյություն ունի տեղեկատվության մենաշնորհ. ՋԼՄ-ները չափազանց թույլ են:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

«Կարծում եմ, լուրջ փոփոխություն կա՝ դեպի վատը:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

Ուսումնասիրությունները հաստատում են ֆոկուս խմբերի բացահայտումներն այն մասին, որ Ադրբեջանում ՋԼՄ-ների ազատության ընդհանուր անկում է դիտվում, հատկապես, 2003 թ. նախագահական ընտրություններից հետո: Սրա նշանները նկատելի են եղել նախընտրական շրջանում և

⁵² IREX (2008). *Media Sustainability Index (MSI) - Europe and Eurasia 2008*. Retrieved 23 September, 2008, from http://www.irex.org/programs/msi_eur/2008/azerbaijan.asp

⁵³ ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն, 2007

⁵⁴ Էլեկտրոնային թղթակցություն Ադրբեջանում Այդքս ՋԼՄ-ների զարգացման ծրագրի՝ թիմի ղեկավարի տեղակալ Շահին Աբասովի հետ, հոկտեմբեր 21, 2008:

⁵⁵ Human Rights Watch Briefing Paper (2004). *Media, the Presidential Elections and the Aftermath*. Retrieved 3 October, 2008, from http://www.hrw.org/backgrounder/eca/azerbaijan/2004/1.htm#_Toc79222789

⁵⁶ Ibid.

արտահայտվել են ընդդիմադիր ընտրարշավի մասին հաղորդումներ տվող լրագրողների ահաբեկումներով և հալածանքներով:⁵⁷

Ֆոկուս խմբերի մասնակիցները, սակայն, չեն գտնում, որ ՁԼՄ-ների աչառության և վերահսկման խնդիրներն առկա են միայն Ադրբեջանում:

«խոսքի ազատության խնդիրներ բոլոր երկրներում էլ կան: Դրա համար էլ Եվրոպական երկրներում այս երեք երկրները մեկտեղ են դիտում: Երեք երկրներում էլ ժողովրդավարությունը միևնույն արագությանը է առաջադիմում:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

Այնուամենայնիվ, շատերը գտնում են, որ վրացական ՁԼՄ-ները համեմատաբար ավելի ազատ են Հարավային Կովկասի երկրներից, մինչդեռ Հայաստանի վերաբերյալ կարծիքները տարբեր են: Որոշ մասնակիցներ համարում են, որ այնտեղ ՁԼՄ-ներն ավելի ազատ են, քան, օրինակ, Ադրբեջանում, մինչ ուրիշները պնդում են հակառակը:

«Կարծում եմ, խոսքի ազատությունն ավելի բարձր է Վրաստանում: Բայց Հայաստանում վիճակն ավելի վատ է, քան Ադրբեջանում:» (կին, 18-40, Ադրբեջան)

«Իմ կարծիքով, Վրաստանում և Ադրբեջանում վիճակը նույնն է: Որոշ հարցերում Վրաստանը կարող է և ավելի առաջ լինել Ադրբեջանից, բայց վիճակն ավելի վատ է Հայաստանում: Հայաստանի նախագահական ընտրությունները վկայում են այն մասին, որ այնտեղ խոսքի ազատություն չկա:» (կին, 18-40)

«Համաձայն միջազգային զեկույցների, վիճակը Վրաստանում ավելի լավ է, բայց ինչ-որ տեղ Հայաստանն ու Վրաստանը կարող են մեկը մյուսին փոխարինել:» (կին, 18-40, Ադրբեջան)

Միայն քչերն են համարում, որ Ադրբեջանն առաջ է Հայաստանից և Վրաստանից:

«Որպես լրագրող, կցանկանայի ասել, որ որոշ տեղեկություն ունեմ նրանց ՁԼՄ-ների մասին: Եկեք խոստովանենք, որ մեր երկրում վիճակն ամենայնպես է: Վրաստանում ներկայումս դեսպոտիզմ է, իսկ Հայաստանում ՁԼՄ-ները փակվեցին և Ինտերնեթն արգելվեց: Ադրբեջանում ՁԼՄ-ներն ավելի անկախ են, քան Կովկասի մյուս երկրներում:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

Մասն 2 Հաղորդումներ

Ֆոկուս խմբերն ընդհանուր առմամբ դժգոհություն են արտահայտում ոչ միայն ազգային լրատվության կողմնակալությունից, այլև միջազգային լուրերի հաղորդման որակից: Մասնավորապես, ֆոկուս խմբերի մասնակիցները բողոքում են, որ միջազգային լրատվությունն իրենց ՁԼՄ-ներում ամբողջությամբ վերցված է օտար ալիքներից:

«Ինչ վերաբերում է միջազգային նորություններին, ապա դրանք այլ ալիքների և աղբյուրների կրկնօրինակն են՝ Ռուսաստանի կամ Թուրքիայի:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

Հետևաբար, մասնակիցները գերադասում են միջազգային լուրերն ստանալ արտաքին աղբյուրներից կամ միջազգային լրատվական ծառայություններից, ինչպիսիք են CNN-ը և BBC -ն:

⁵⁷ Human Rights Watch Briefing Paper (2004). *Media, the Presidential Elections and the Aftermath*. Retrieved 3 October, 2008, from http://www.hrw.org/backgrounder/eca/azerbaijan/2004/1.htm#_Toc79222789

«Միջազգային ալիքները հաղորդում են իրադարձությունների մասին մանրամասնորեն և ժամանակին, իսկ մեր ալիքների տեղեկատվությունը թերի է և ուշացած:» (կին, 40+, Ադրբեջան)

«Կարծում եմ, նրանք անբավարար միջազգային լրատվություն են հաղորդում: Ես նորությունները թուրքական ալիքներով եմ դիտում: Նրանք ավելի վերլուծական, ավելի մանրամասն և թարմ լուրեր են հաղորդում, մինչդեռ մերոնք արխիվային պատկերներ են ցույց տալիս և համեմունք են դրանք դատարկ խոսքերով:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

Ինչպես արդեն ասվել է մեր զեկույցում, Թուրքական ալիքների մատուցած միջազգային լրատվությունը գուցե ավելի բարեխիղճ է և ժամանակին, սակայն այն հասցեագրված է թուրքական լսարանին: Ադրբեջանին հետաքրքրող, երկրի արտաքին քաղաքականության համար կարևոր նյութերը, ինչպիսիք են հաղորդումները Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, կարող են ոչ միշտ ներկայացված լինել թուրքական լուրերում:

Միջազգային լրատվության որակը նույնպես միակ բանը չէ, որ մտահոգում է մասնակիցներին: Նրանք բողոքում են նաև այն բանից, որ միջազգային լրատվությունը հաճախ կազմված է լինում անհարիր սյուժեներից կամ շոու բիզնեսին վերաբերող նորություններից:

«Դժբախտաբար, հեռուստաալիքներում վերջերս չափազանց մեծ տեղ է հատկացվում շոու բիզնեսին: Ամեն ծրագիր իր ամենօրյա եթերաժամն ունի: Մարդիկ հոգնել են շոու բիզնեսին վերաբերող նորություններից: Ժողովրդի 10 տոկոսն է դիտում այդ ծրագրերը, մնացած 90 տոկոսը չի դիտում:» (տղամարդ, 40+, Ադրբեջան)

Ադրբեջանի ԶԼՄ-ների վիճակի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բացի դարաբաղյան հակամարտության հետևանքով ներքին տեղահանության ենթարկված անձանց խնդիրներին նվիրված հատուկենտ՝ քաղաքական օբերտոններով հագեցած հաղորդումներից, երկրի սոցիալական հարցերին վերաբերող անդրադարձները շատ քիչ են:⁵⁸

Եվ, թեև մասնակիցներից շատերի համար թուրքական հեռարձակումներն ու տպագիր լրատվամիջոցները տեղեկատվության գերադասելի աղբյուր են, նրանք այնուամենայնիվ, ցանկություն ունեն էլ ավելի շատ լրատվություն ստանալու Թուրքիայի վերաբերյալ:

«Ավելի շատ ուշադրություն է դարձվում մեր հարևան երկրներին. Թուրքիային, այնտեղի գործընթացներին, տնտեսության զարգացմանը, այլևայլ լուրեր Թուրքիայի մասին:» (տղամարդ, 40+, Ադրբեջան)

Մասնակիցները համարում են, որ մյուս հարևան երկրների վերաբերյալ նույնպես պետք է ավելի շատ նորություններ հաղորդվեն միջազգային լրատվության մեջ:

«Գոյություն ունեն Ադրբեջանին հարևան երկրներ, ինչպես՝ Ռուսաստանը, Իրանը, Հայաստանը և Թուրքիան: Դրանց նորությունները պիտի ավելի շատ հաղորդվեն ԶԼՄ-ների կողմից: Մեզ պետք չեն եվրոպական նորությունները: Կարծում եմ, պետք է ավելի կենտրոնանալ հարևան երկրների վրա:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

⁵⁸ IREX (2008). *Media Sustainability Index (MSI) - Europe and Eurasia 2008*. Retrieved 23 September, 2008, from http://www.irex.org/programs/msi_eur/2008/azerbaijan.asp

Հետաքրքիր է, որ փոքրաթիվ մասնակիցներ հիշատակում են Հայաստանը մյուս երկրների շարքում, առանց որևէ առանձնահատուկ շեշտադրման: Ղարաբաղյան հակամարտության հակադիր կողմի մասին տեղեկատվության կարևորությունն ընդունվում է մասնակիցների կողմից, միայն երբ մոդերատորն առանձնակի հետևողականությամբ է դնում հարցը: Այդ դեպքերում մասնակիցները բողոքում են, որ ՁԼՄ-ները բավականաչափ տեղեկատվություն չեն մատուցում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի մասին, ընդ որում, միաժամանակ շեշտում են, որ ավելի լավ է ճանաչել թշնամուն:

«Նրանք մեր թշնամին են, և պիտի տեղյակ լինենք այնտեղ տեղի ունեցող իրադարձությունների մասին:» (կին, 18-40, Ադրբեջան)

Հիմնական դժգոհությունն, այնուամենայնիվ, ոչ այնքան Հայաստանին վերաբերող լրատվությունից է, որքան հակահայկական պրոպագանդայի բացակայությունից ՁԼՄ-ներում: Ֆոկուս խմբերի հիմնական մտահոգությունն այն է, որ երիտասարդ սերունդը բավականաչափ տեղեկացված չէ պատերազմի մասին:

«Ես կարծում եմ, նրանք պիտի պատկերվեն որպես մեր թշնամիներ, որպեսզի երիտասարդ սերունդն ու երեխաները հասկանան, որ արդեն տարիներ է, որ մեր տարածքներն օկուպացված են հայերի կողմից, ինչպես և այն մասին, թե ինչ չարիք են գործել նրանք մեր ժողովրդի դեմ:» (կին, 18-40, Ադրբեջան)

Թվում է, թե այս տեսակետն ուղղակի հակասության մեջ է գտնվում մինչ այդ արտահայտված՝ ՁԼՄ-ներին պրոպագանդայի մեքենայի վերածվելուց զերծ պահելու և դրանք անաչառ ու պրոֆեսիոնալ լրատվության աղբյուր դարձնելու ցանկության հետ: Քանի որ անկախ Ադրբեջանում կենտրոնական դեր ունի կոլեկտիվ տրավման, քաղաքացիներն ասում են, որ պրոպագանդան անհարաժեշտ է, սակայն դա չի բացառի անաչառ լրատվությունը Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ, եթե գոյություն ունենան այլ ծրագրեր, հատկապես, պատմությանը վերաբերող, որոնք և կարող են ծառայել պրոպագանդայի նպատակներին:

Այսուամենայնիվ, ամենալուրջ խոչընդոտն անաչառ ՁԼՄ-ներ ունենալու ճանապարհին, որ ֆոկուս խմբերի մասնակիցները մասնավորում են, այն է, որ ՁԼՄ-ները չեն կատարում իրենց վերագրվող՝ Հայաստանը որպես թշնամի պատկերողի դերը:

«Ներքին կարգով մենք պետք է դաստիարակենք մեր երիտասարդությանն այն հոգեբանությամբ, որ ոչ մի կտոր Ղարաբաղյան հող չի կարող տրվել մեր թշնամիներին: Սա այն գաղափարն է, որ պիտի առաջ մղվի ներքին կարգով: Ես վստահ եմ, որ դա ի վերջո արդյունք կտա:» (տղամարդ, 18-40, Ադրբեջան)

Իհարկե, լրագրողների կողմից այս դերը կատարելու անհրաժեշտությունն առանձնակի կարևոր են համարում ֆոկուս խմբերի ավելի տարեց մասնակիցները: Նրանք համարում են, որ Ղարաբաղյան խնդիրը կորցնում է իր արդիականությունը երիտասարդ ադրբեջանցիների մեջ, և անհանգստանում են, որ հաջորդ սերունդները կարող են նորից կռվելու ցանկություն չունենալ, երբ դրա կարիքը լինի:

«Ընդհանուր առմամբ, 90-ականների հարձակողականությունը թուլանում է: Եվ մենք, և՛ նրանք դառնում ենք անտարբեր: Նրանք իրենց սոցիալական և տնտեսական խնդիրներն ունեն, մենք՝ մերը, և դրանք լուսաբանվում են ՁԼՄ-ներում: Բայց այս խնդիրը մնում է չլուծված:» (տղամարդ, 40+, Ադրբեջան)

Հետևաբար, համարվում է, որ Լեռնային Ղարաբաղի մասին հաղորդումները պետք է պատերազմի պատկերը մշտապես վառ պահեն և Հայաստանի հանդեպ թշնամանք սերմանեն: Ինչևէ, թեև մասնակիցները չեն հավատում տեղական կամ միջազգային լուրերի պաշտոնական հաղորդումներին, նրանք կախման մեջ են դրանցից, քանի որ կարիք ունեն տեղեկանալու Լեռնային Ղարաբաղի մասին:

«Իհարկե, պետական հեռուստատեսությունը ճշմարիտ նորություններ է հաղորդում: Հնարավոր է, որ նրանք որոշ բաներ թաքցնեն, բայց ոչ ամեն ինչ:»
(տղամարդ, 40+, Ադրբեջան)

«Հիմնականում հեռուստաալիքների մեծամասնությունը օբյեկտիվորեն է հաղորդում Լեռնային Ղարաբաղի մասին: ANS-ը տարբերվում է մյուսներից այն առումով, որ մշտապես հիշեցնում է մեզ խնդրի մասին: Միացնելով այս ալիքը, միշտ կարող եք տեսնել:» (տղամարդ, 40+, Ադրբեջան)

Կրկին. սա, հավանաբար, կարելի է բացատրել հասարակության մեջ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ մեկ՝ ընդհանուր կարծիքի գոյությամբ, ինչպես նաև այն բանով, որ ժողովրդի հիմնականում ընդունում է հակամարտության խնդրում պաշտոնական դիրքորոշումը: Արդյունքում՝ ազգաբնակչությունն ավելի հակված է ընդունելու պետության մատուցած տեղեկատվությունն այս խնդրի վերաբերյալ:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Հաշվի առնելով, ինչպես ֆոկուս խմբերի վերհանած, այնպես և այլ ուսումնասիրությունների բացահայտած խնդիրները, մեր զեկույցն առաջարկում է հետևյալ հանձնարարականները:

Հայաստանի և Ադրբեջանի կառավարություններին

Բարեխիղճ հաղորդումները կարող են ծառայել ազգային շահերին

Միջազգային հսկիչ խմբերն ավանդաբար պնդել են, որ ՋԼՄ-ների ազատությունն ինքնին ժողովրդավարական զարգացման անհրաժեշտ բաղադրիչն է: Լինելով, անկասկած, ժողովրդավարության հանգուցային տարր, այս ռազմավարությունն առայժմ արդյունավետ կերպով չի գործադրվել ո՛չ Հայաստանում, ո՛չ Ադրբեջանում:

Մինչդեռ ֆոկուս խմբերն անհարժեշտ են համարում վարել այլ ռազմավարություն, որը կղեկավարվի այն գաղափարով, որ բարեխիղճ և անաչառ լրատվությունը ծառայում է ազգային շահերին: Երկու երկրներում էլ, օրինակ, ֆոկուս խմբերի մասնակիցները ցանկություն են հայտնում ավելի բարեխիղճ տեղեկատվություն ստանալու մեկը մյուսի մասին, իրենց ազգային շահերը պաշտպանելու նպատակով: Այս քաղաքացիների համար պարզ է, որ իշխանությունների կողմից ինքնախաբեությունը կարող է հանգեցնել անբարենպաստ հետևանքների, և որ ավելի լավ տեղեկացված քաղաքացիները կարող են ավելի ակտիվ դեր խաղալ իրենց երկրների պաշտպանության գործում: Հաշվի առնելով Հարավային Կովկասում գոյություն ունեցող դիրքորոշումները, կարելի է ենթադրել, որ ավելի վստահելի միջազգային տեղեկատվությունը դժվար թե վարկաբեկի Հայաստանի կամ Ադրբեջանի վարչակարգերը, ավելին, այն կարող է անգամ ուժեղացնել դրանք:

Տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների հանրությանը և լրագրողներին

Գործի դնել «գլխիվայր» վարից վեր (bottom-up) մոտեցում լրագրողական էթիկային

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի մեր նախագծի նպատակն է լրացնել լրագրողի վարքագիծը կարգավորող կամավոր բարոյական կոդեքսի ակնառու բացը ողջ Հարավային Կովկասում: Ժողովրդավարական երկրների կառավարությունները հազվադեպ են հաջողում հասարակության կողմից պաշտպանվող կոդեքսների վարքագծի ներմուծման գործում:

Ինչպես ցույց է տալիս Պարագվայի օրինակը, ավելի արդյունավետ է « վարից վեր» (bottom-up) ռազմավարությունը, որը հասնում է նպատակին, որովհետև հանրությունը կարիք ունի լրագրողական ուղղախոսության: Բացի այդ, շարժման մեջ դրվելով, շուկայի ուժերը կղեկավարվեն բարոյական լրագրությամբ:⁵⁹ Միջազգային դոնորներն ու հասարակական կազմակերպությունների հանրությունը կարող է օգնել՝ ֆինանսավորելով և աջակցելով ՋԼՄ-ներին և լրագրողներին հետևելու որոշակի վարքագծի, մինչև որ շուկայական ուժերը գերակշիռ դառնան: Թրեյնինգը կարող է իրականացվել ամիսներ՝ և ոչ օրեր տևող հետևողական ջանքերի տեսքով, լրագրողներին հատկացնելով իրենց գործունեության տեսակին հարիր հատուկ հետադարձ կապ:

Այս թրեյնինգների նպատակը պիտի լինի ստեղծել այնպիսի ՋԼՄ-ներ, որոնք.

1. ավելի մեծ ուշադրություն կհատկացնեն միջազգային լրատվությանը և կօգտվեն տարաբնույթ աղբյուրներից, կստուգեն փաստերը և համարժեք վերլուծություն կմատուցեն՝ հատկապես հեռուստատեսությամբ;

⁵⁹ Ortega, B. (Winter, 2002). “Bringing Investigative Reporting to One of the Most Corrupt Countries in the World”. *Knightline International*, pg 42-45. Retrieved October 7, 2008, from <http://www.knight.icfj.org/i/ortega.pdf>

2. պետք է ընդլայնել թուրքական ՋԼՄ-ների՝ Ադրբեջանում ունեցած ազդեցության ուսումնասիրությունը;
3. պետք է ուսումնասիրել Հայաստանում և Ադրբեջանում ներկայումս ժողովրդայնություն վայելող նորությունների կայքերը, դրանց ծագումը և լրատվության պրոցեսը:

Հեռուստատեսությանը և մյուս ՋԼՄ-ներին ուսուցանել սովորեցնել շուկայի ուսումնասիրություն կատարել

Ե՛վ Հայաստանում, և՛ Ադրբեջանում շուկայի ուսումնասիրության անհարժեշտություն է առաջացել, մինչդեռ շուկան լավագույն կերպով վերահսկելու գիտակցումը ծայրաստիճան թերի է զարգացած: Բացի այդ, կատարվող հետազոտությունների մեծամասնությունը հետքըքրված է սպառման խնդրով, ինչպես նաև որոշ չափով՝ հեռուստատեսային ռեյտինգներով: Հեռուստակայանները երբևէ հետազոտություն չեն կատարել, պարզելու համար, թե ինչ կարծիք ունեն հեռուստադիտողներն իրենց ալիքի մասին:

Առանձնակի հանձնարարելի են հեռուստադիտողների հետ բարձր մակարդակի ֆոկուս խմբեր վարել ուսուցանող թրեյնինգները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Amnesty International (2007). *Azerbaijan: The Contracting Space for Freedom of Expression*. 2007. Retrieved 24 September, 2008, from <http://www.amnesty.org.ru/library/Index/ENGEUR550032007?open&of=ENG-AZE>
2. Armenian Center for National and International Studies (2005). *The Karabakh story: 17 years in progress*. Retrieved October 6, 2008, from http://www.acnis.am/pr/karabakh_story/Socio12eng.pdf
3. ՀՌԿԿ Տվյալների հավաքագրման նախաձեռնություն 2007 հասանելի է www.crrcenters.org
4. Freedom House (2007). *Map of Press Freedom 2007 - Armenia*. Retrieved 23 September, 2008, from <http://www.freedomhouse.org/template.cfm?page=251&country=7129&year=2007>
5. Freedom House (2007). *Map of Press Freedom 2007 - Azerbaijan*. Retrieved 23 September, 2008, from <http://www.freedomhouse.org/template.cfm?page=251&country=7129&year=2007>
6. Gunther, A. C. (Summer, 1992). "Biased Press or Biased Public? Attitudes Toward Media Coverage of Social Groups". *The Public Opinion Quarterly*. Vol. 56, No 2.
7. Human Rights Watch Briefing Paper (2004). *Media, the Presidential Elections and the Aftermath*. Retrieved 3 October, 2008, from http://www.hrw.org/backgrounder/eca/azerbaijan/2004/1.htm#_Toc79222789
8. IREX (2008). *Media Sustainability Index (MSI) - Europe and Eurasia 2008 (Armenia)*. Retrieved 23 September, 2008, from http://www.irex.org/programs/MSI_EUR/2008/armenia.asp
9. IREX (2008). *Media Sustainability Index (MSI) - Europe and Eurasia 2008 (Azerbaijan)*. Retrieved 23 September, 2008, from http://www.irex.org/programs/msi_eur/2008/azerbaijan.asp
10. Lee, R., Lepper, M and Hubbard M. (1975). "Perseverance in Self-perception and Social Perceptions: Biased Attributional Processes in the Debriefing Paradigm". *Journal of Personality and Social Psychology* 32:880-92.
11. Lichtenberg, J. ed. (1990). *Democracy and the Mass Media*. New York: Cambridge. University Press.
12. Media Rights Institute (2008). *Legal Status of Media in Azerbaijan - Semiannual Report*. Retrieved 23 September, 2008, from <http://www.mediarights.az/index.php?lngs=eng&id=18>
13. Mughan, A., ed. (2002). *Democracy and the Media: A Comparative Perspective*, New York: Cambridge University Press.
14. Ortega, B. (Winter, 2002). "Bringing Investigative Reporting to One of the Most Corrupt Countries in the World." Knightline International, pg 42-45. Retrieved October 7, 2008, from <http://www.knight.icfj.org/i/ortega.pdf>
15. OSCE (2006). *The State of Media Freedom in Armenia: Observations and Recommendations*. Retrieved 23 September, 2008, from http://www.osce.org/documents/oy/2007/05/24699_en.pdf
16. OSCE/ODHIR Election Observation Mission (30 May, 2008). *Republic of Armenia Presidential Elections 19 February, 2008*. Warsaw. Retrieved 23 September, 2008, from http://www.osce.org/documents/odihr/2008/05/31397_en.pdf

17. OSCE (14 July 2006). *Information on Freedom of Expression and Mass Media in the Republic of Azerbaijan* (In Russian). Retrieved from 3 October, 2008, http://www.osce.org/documents/rfm/2006/07/19941_ru.pdf
18. Vedder A. and Wachbroit A. (October 28, 2004). "Reliability of information on the Internet: Some distinctions". *Ethics and Information Technology*. Volume 5. Pg. 211-215.
19. Yerevan Press Club, Yeni Nesil Journalists Union of Azerbaijan & Black Sea Press Association (2005). *What Can a Word Do?: Materials of Armenian, Azerbaijani and Georgian Press Analysis*. Retrieved September 20, 2008, from <http://www.ypc.am/eng/?go=act/studies>

ՋԼՄ-ՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆ

Տպագիր լրատվամիջոցներ

Հայաստանի հանրապետություն – օրաթերթ, պետական

Առավոտ – օրաթերթ, մասնավոր

Գոլոս Արմենիի – մասնավոր լրագիր

Ազգ - օրաթերթ. հիմնադրված է «Ռամկավար-ազատական կուսակցության» կողմից

Իրավունք – շաբաթաթերթ, հիմնադրված է «Սահմանադրական իրավունք կուսակցության» կողմից

Երկիր – շաբաթաթերթ, հիմնադրված է «Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության» կողմից, ունի անգլերեն էջեր

Հայկական ժամանակ – օրաթերթ, հիմնադրված է ընդդիմադիր՝ «Ժողովրդավարական հայրենիք կուսակցության» կողմից

4-րդ իշխանություն – մասնավոր լրագիր, ընդդիմադիր կողմնորոշում ունի

Հեռուստատեսություն

Հ1 – 2000 թվականից ի վեր Ազգային հեռուստատեսությունը վերանվանված է «Հանրային հեռուստատեսություն» և օգտվում է «Հ1» լոգոյից

Այս ալիքն ամենալայն հեռարձակումն ունի Հայաստանում

Շանթ TV – հիմնադրվել է Հայաստանի երկրորդ մեծ քաղաքում՝ Գյումրիում, Արթուր Երզնկյանի կողմից 1994թ.: Ներկայումս Հայաստանի առաջատար հեռուստաընկերություններից մեկն է և հեռարձակվում է երկրով մեկ:

Երկիր Մեդիա - մասնավոր է, ճանաչված է իր քաղաքական թոք-շունների շնորհիվ

Ա1+ - եղել է ամենասիրված անկախ լրատվական ալիքը, մինչև 2002թ., երբ Հայաստանի կառավարության կողմից եթերազրկվել է: Ներկայումս Ա1+-ի վեբ կայքը օրվա քաղաքական լուրերն է մատուցում հայերենով, ռուսերենով և անգլերենով

Արմենիա TV – Հայաստանի առաջին մասնավոր հեռուստաալիքն է և հեռարձակում է տարատեսակ ծրագրեր, այդ թվում՝ վերջին լուրերի թողարկումներ, ժամանցի հաղորդումներ, քաղաքական և սոցիալական թեմաներով թոք-շոուններ, պատմական, մշակութային, մանկական ծրագրեր, գեղարվեստական ֆիլմեր և սպորտային հաղորդումներ:

ԱԼՄ – մասնավոր է, եթեր է դուրս գալիս 2002-ի ապրիլից

Ռադիո

Ազատություն (Radio Liberty) ռադիոկայան – Օրվա լուրեր, վերլուծություններ և ուղիղ ռադիոհաղորդումներ ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ

Ամերիկայի ձայն - առաջին անգամ եթեր է դուրս եկել 1942թ., մուլտիմեդիա միջազգային հաղորդումների ծրագիր է, հիմնադրված է ԱՄՆ կառավարության կողմից

Հայաստանի հանրային ռադիո - ազգային, պետական

Լրատվական գործակալություններ

Առկա - մասնավոր, ունի անգլերեն էջեր

Արմենպրես – պետական, ունի անգլերեն էջեր

Նոյյան տապան – մասնավոր, ունի անգլերեն էջեր

Մեդիամաքս – մասնավոր, ունի անգլերեն էջեր
Արմինֆո – մասնավոր

ԱՂՐԲԵԶԱՆ

Տպագիր լրատվամիջոցներ

Զերկալո, էխո – տարածված ռուսալեզու անկախ լրագրեր

525 - ադրբեջաներեն անկախ լրագիր

Խալկ գազեթի, Ազեբայջան, Ռեսպուբլիկա - պաշտոնական պետական լրագրեր

Ազադլըզ, Հյուռիեթ, Ենի Մուսավաթ, Բիզիմ Յուլ, Ենի գաման – ընդդիմադիր լրագրեր

Հեռուստատեսություն

Ազտվ – պաշտոնական պետական ալիք: Տարածված է շրջաններում, հատկապես, տարեց մարդկանց մեջ
ANS (Azerbaijan News Services) - երկրի առաջին մասնավոր ալիքն է, հիմնականում քաղաքական լուրեր է հաղորդում: ANS-ը մյուս ալիքների համեմատ ավելի հավասարակշիռ լրատվություն է հաղորդում

Լիդեր TV – հիմնադրվել է Մեդիա հոլդինգի կողմից 2000թ.: ANS-ից հետո երկրորդ ամենամեծ լրատվական ալիքն է Ադրբեջանում: Իշխանամետ է, ընդդիմության հանդեպ հարձակողական դիրք ունի: Բացի լրատվությունից, կենտրոնացած է ժամանցի ծրագրերի, հատկապես, սպորտային հաղորդումների վրա:

ITV (Հանրային հեռուստատեսություն) - Հիմնադրված է 2005թ., ի կատարումն Եվրախորհրդի՝ Ադրբեջանի առջև դրված պայմանի: Այս ալիքը հիմնականում հանրային բանավեճեր և նման հաղորդումներ է հեռարձակում և ձգտում է չեզոք լինել թե՛ իշխանամետ և թե՛ ընդդիմադիր կուսակցությունների նկատմամբ:

ATV և Space TV – ժամանցի ծրագրեր են հաղորդում, հատկապես՝ երաժշտություն, շոու բիզնես և կինոնկարներ:

Հեզեր TV – նախկին թուրքական «Սամանյուլու» ալիքն է, մասնավոր է, հաղորդում է նորություններ, ժամանցի ծրագրեր և երաժշտություն:

CNN-ի թուրքերեն ծառայություն – հնարավոր է դիտել միայն արբանյակային ալեհավաքով:

Ռադիո

BBC – հիմնականում լուրեր է հաղորդում՝ անգլերեն, ռուսերեն և հայերեն

Ազադլիկ (Radio Liberty) Radio – հաղորդումները վարում է ադրբեջաներեն, «Ամերիկայի ծայնից» որոշ մեջբերումներով, ֆինանսավորվում է ԱՄՆ Կոնգրեսի կողմից, անկախ լրատվություն և մեկնաբանություններ է մատուցում քաղաքական և հասարակական խնդիրների վերաբերյալ, հաճախ վիճահարույց հարցեր է բարձրացնում, և կամ ներկայացնում է այլընտրանքային տեսակետներ:

ANS-CM - պատկանում է ANS ընկերությանը, լրատվական և երաժշտական ուղղվածություն ունի:

Լրատվական գործակալություններ

Ազարտաս – պետական, ունի անգլերեն էջեր;

Թուրան – մասնավոր է, ունի անգլերեն էջեր:

Թրենդ - մասնավոր է, ունի անգլերեն էջեր:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՌԿԿ Հայաստանի և Ադրբեջանի աշխատողները ստեղծել են չորսական ֆոկուս խումբ մայրաքաղաքներ՝ Երևանում և Բաքվում: Այդ չորս խումբը կազմել են՝ մեկ խումբ միջև 40 տարեկան կանայք, մեկ խումբ միջև 40 տարեկան տղամարդիկ, մեկ խումբ 40-ն անց կանայք և մեկ խումբ 40-ն անց տղամարդիկ: ՀՌԿԿ-ն հավաքագրել է 20-ական անձ յուրաքանչյուր ֆոկուս խմբում, այն հաշվով, որ ապահովված լինի առնվազն 10 անձի մասնակցությունը:

Հավաքագրողները մասնակիցներին ընտրել են քաղաքի՝ իրենց ընտրած բանուկ վայրերում (առնվազն, երկու կես յուրաքանչյուր քաղաքում), անցորդներին դիմելով: Ընտրության միակ չափանիշը եղել է (բացի վերը նշված հմնական տարիքային հատկանիշից) օրեկան առնվազն մեկ ժամ լուրեր լսելու պարագան:

ՀՌԿԿ հայաստանյան աշխատողները դժվարության են հանդիպել ֆոկուս խմբերի մասնակիցների հավաքագրման գործում: Դրա հիմնական պատճառը փողոցում հարցված մարդկանց մեջ ՋԼՄ-ների հանդեպ վստահության բացակայությունն է: Մասնակիցների ընտրության համար օգտագործվել են 2007թվականին հարցվածների ցուցակները:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հայաստան

- Տղամարդիկ, 18-40 տարեկան – հուլիսի 25, 2008
 - Խմբի բնութագիրը. 9 մասնակից; մասնակիցների միջին տարիքը՝ 25,4; 5 ուսանող, 2 լրիվ դրույքով ախատող, 2 ոչ լրիվ դրույքով աշխատող:
- Տղամարդիկ, տարիքը՝ 40-ն անց - հուլիսի 26, 2008
 - Խմբի բնութագիրը. 8 մասնակից; մասնակիցների միջին տարիքը՝ 59; 6 աշխատող, 2 չաշխատող, 3 թոշակառու:
- Կանայք, 18-40 տարեկան – հուլիսի 26, 2008
 - Խմբի բնութագիրը. 8 մասնակից; մասնակիցների միջին տարիքը՝ 21; 6 ուսանող, 2 չաշխատող:
- Կանայք, տարիքը՝ 40-ն անց – հուլիսի 27, 2008
 - Խմբի բնութագիրը. 8 մասնակից; մասնակիցների միջին տարիքը՝ 53,5; 5 չաշխատող, 3 աշխատող:

Ադրբեջան

- Տղամարդիկ, 18-40 տարեկան – օգոստոսի 2, 2008
 - Խմբի բնութագիրը. 10 մասնակից; մասնակիցների միջին տարիքը՝ 26,6; 6 աշխատող, 3 չաշխատող, 1 ուսանող:
- Տղամարդիկ, տարիքը՝ 40-ն անց – օգոստոսի 2, 2008
 - Խմբի բնութագիրը. 6 մասնակից; մասնակիցների միջին տարիքը՝ 54; 3 աշխատող, 3 չաշխատող:
- Կանայք, 18-40 տարեկան – օգոստոսի 5, 2008
 - Խմբի բնույթը. 11 մասնակից; մասնակիցների միջին տարիքը՝ 25; 7 աշխատող, 3 չաշխատող, 1 ուսանող:
- Կանայք, տարիքը՝ 40-ն անց, օգոստոսի 4, 2008
 - Խմբի բնութագիրը. 11 մասնակից, մասնակիցների միջին տարիքը՝ 44,4; 8 աշխատող, 3 չաշխատող:

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՖՈԿՈՒՍ ԽՄԲԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

I. Ընդհանուր միջազգային լրատվություն/ՋԼՄ-ների և պետության դերը

1. Ո՞ր լրատվամիջոցներն են ձեզ ավելի լավ տեղեկացնում միջազգային իրադարձությունների մասին:
2. Արդյոք ազգային ՋԼՄ-ները բավարա՞ր լրատվություն են հաղորդում միջազգային նորությունների և իրադարձությունների մասին: Բավարա՞ր եք համարում այդ լրատվության մակարդակը:

[հիշեցում] Ինչպիսի՞ն է վիճակը միջազգային քաղաքականության, տնտեսության/առևտրի և մշակույթի պարագայում:

3. Ո՞ր երկրներն ու տարածաշրջանները պիտի լինեն ՋԼՄ-ների ուշադրության կենտրոնում:

[ավելի խորանալով] Ի՞նչ չափանիշերով պիտի ընտրվեն այլ երկրից հաղորդվելիք նորությունները:

4. Իրադարձությունը տեղի ունենալուց որքա՞ն ժամանակ հետո պիտի այն հաղորդվի՝ անմիջապես, թե՞ որոշ ժամանակ հետո:

[Սրանց համար, ովքեր կպատասխանեն «որոշ ժամանակ հետո»] Որքա՞ն ժամանակ հետո:

5. Պետությունն իրավունք ունի՞ կարգավորելու ՋԼՄ-ների աշխատանքը:
6. Պետությունն իրավունք ունի՞ վերահսկելու ՋԼՄ-ներին:
7. Լրագրողները պիտի՞ քրեական պատասխանատվություն կրեն իրենց գրածի համար:
8. Կարծու՞մ եք, արդյոք, որ Վրաստանում և Ադրբեջանում խոսքի ավելի ազատություն կա, քան Ադրբեջանում:
9. Ձեր կարծիքով, տեղեկատվության տարբեր տեսակի ընկալումը մարդկաց կողմից տարբե՞ր է՝ կախված նրանց դասակարգային պատկանելությունից, կամ բնակության շրջանից:

/հիշեցում Ադրբեջանի համար/: ANS, AzTV, ATV, ITV, Lider, Space TV; Zerkalo/Ayna, Azadlig, Azerbaijan, Musavat, Xalq:

II. Հայաստան, Ադրբեջան, Լեռնային Ղարաբաղ՝ առանձնահատուկ լրատվություն

1. Ինչու՞մն է կայանում ՁԼՄ-ների պատասխանատվությունն ու դերը ղարաբաղյան հակամարտության լուսաբանման խնդրում:
2. Արդյո՞ք ՁԼՄ-ները (հայկական կամ ադրբեջանական) պիտի հաղորդեն հակադիր կողմի այն նորությունները, որոնք չեն առնչվում ձեր երկրի, կամ Լեռնային Ղարաբաղի հետ:

[Հիշեցում] Օրինակ, արդյոք ՁԼՄ-ները պիտի՞ հաղորդեն տեղական քաղաքական, տնտեսական կամ մշակութային խնդիրների մասին Հայաստանում, կամ Ադրբեջանում:

3. Ինչպե՞ս է պատկերված ՁԼՄ-ներում ղարաբաղյան հակամարտության հակադիր կողմի ժողովուրդը: Գործու՞մ են, արդյոք, կարծրատիպեր: Արդյո՞ք դրանց մեջ որոշ ճշմարտություն կա:
4. Ի՞նչ փոփոխությունների են ենթարկվել Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ՁԼՄ-ները ժամանակի ընթացքում:

[Հիշեցում Ադրբեջանի համար] Փոխվե՞լ է, արդյոք, որևէ բան Բաքու-Ջեյհան գազատարի բացումից հետո:

III. Կարծիք կլիպի/հոդվածի ամփոփման մասին

1. Ի՞նչ կարծիքի եք այս զեկույցի մասին:

[Հիշեցում] Այն լիարժե՞ք է: Օբյեկտի՞վ է: Աչառու՞ է:

2. Կա՞ արդյոք որևէ տեղեկատվություն, որ պիտի ներառվեր զեկույցի մեջ:
3. Ի՞նչ եք զգում այս կլիպը/հոդվածը դիտելիս/կարդալիս:

IV. Բարեխղճություն/աչառություն

1. Ու՞մ տեսակետն ու կարծիքը պիտի ներկայացնեն ՁԼՄ-ները:
2. Արդյոք, հաղորդումը պիտի օբյեկտի՞վ լինի, թե՞ այն պիտի լինի սուբյեկտիվ և ներկայացնի լրատվությունը հաղորդողի կարծիքը:
3. Ի՞նչ է ՁԼՄ-ների բարեխղճությունը:
4. Գտնու՞մ եք, արդյոք, որ ձեր երկրում (Հայաստանում կամ Ադրբեջանում) գոյություն ունի ՁԼՄ-ների աչառության խնդիր: Եթե այո, ապա՝ ինչու՞: Եթե ոչ, ապա՝ իչու՞ ոչ:
5. Գտնու՞մ եք, արդյոք, որ ՁԼՄ-ների բարեխղճությունն ու աչառությունը (Հայաստանում կամ Ադրբեջանում) ժամանակի ընթացքում փոփոխության է ենթարկվել: Փոփոխությունը դեպի լա՞վն է, դեպի վա՞տը, թե՞ փոփոխություն չկա:

V. Բավարարվածություն/վստահություն

1. Բավարարվա՞ծ եք, արդյոք, ՁԼՄ-ների լրատվությամբ:
2. Ինչպե՞ս կգնահատեիք դրանց աշխատանքը 1-ից 10 սանդղակի վրա:

[Հիշեցում] Ինչպե՞ս կարելի է համեմատել ՁԼՄ-ների տեսակները (այսինքն, հեռուստատեսությունը-տպագիր ՁԼՄ-ներ-ռադիո-էլեկտրոնային լրատվություն)

3. ՁԼՄ-ների ո՞ր տեսակին եք ավելի վստահում, և ինչու՞:
4. ՁԼՄ-ների ո՞ր տեսակին չեք վստահում, և ինչու՞:
5. ՁԼՄ-ների ո՞ր տեսակն եք ավելի վստահելի համարում Լեռնային Ղարաբաղի մասին հաղորդումների պարագայում: Որո՞նք եք համարում ամենապակաս վստահելին: Ինչու՞:
6. ՁԼՄ-ների ո՞ր տեսակին եք ավելի վստահում ձեր երկրի (Հայաստանի կամ Ադրբեջանի) այն ազգային խնդիրների լուսաբանման խնդրում, որոնք չեն առնչվում Լեռնային Ղարաբաղի հետ: Որո՞նք եք պակաս վստահելի համարում: Ինչու՞:

7. Վստահում եք, արդյոք, պետության կողմից վերահսկվող աղբյուրների (պետական գործակալությունների պաշտոնական լրատվական մարմինների) տեղեկատվությանը Լեռնային Ղարաբաղի և ձեր երկրի (Հայաստանի կամ Ադրբեջանի) մասին:
8. Վստահում եք, արդյոք, անկախ աղբյուրների տեղեկատվությանը Լեռնային Ղարաբաղի և ձեր երկրի (Հայաստանի կամ Ադրբեջանի) մասին:
9. Առաջացնում է, արդյոք, ձեր մեջ հայրենասիրական զգացմունքներ պետության կողմից վերահսկվող աղբյուրների (պետական գործակալությունների պաշտոնական լրատվական մարմինների)՝ հակամարտությանը վերաբերող լրատվությունը:
10. Ի՞նչ կերպ պիտի ՋԼՄ-ները բարելավվեն, որպեսզի դուք վստահեք դրանց;
11. Արդյոք ներկայումս ավելի՞ կամ պակաս՞ եք վստահում ՋԼՄ-ներին, քան անցյալում: Ինչու՞:

[Հիշեցում Ադրբեջանի համար] 1993-ից առաջ և հետո՞: 2003-ից առաջ և հետո՞: 2005-ից առաջ և հետո՞: